

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ*

Մ. ԱՐԵՂՆԱՆԻ

Ա.

Կրօնականն էր 10-րդ դարու ոգին ոչ միայն մեր մէջ, այլ և ընդհանուր աշխարհում։ Այդ ոգու զարգացմանը նպաստել էին զարերի ընթացքում մեր եկեղեցու հայրերն ու վարդապետները իրենց քարոզներով և կենդանի օրինակներով, իրենց դասնաբանական վէճերով ու կոխներով։ այդ պատրաստել էր նաև նախորդ դարերի գրականութիւնն իր ամբողջութեամբ։ Կրակապաշտութեան, ապա և մահմեդականութեան դէմ վաքած կոխներէ բովով անցնելով՝ հայ ժողովուրդն իր առաջաւոր մասով իւրացրել էր արդէն քրիստոնէական աշխարհայեցողութիւնը։ Յարմար ժամանակ էր միայն պէտք, որ քրիստոնէական ոգին իր բոլոր ուժով երեան դար հայ կեանքի մէջ և առաջ բերէր իր գեղարուեստն ու բանաստեղծութիւնը։ Եւ այդ լինում է հարիւրամեայ խաղաղութեան շրջանում։ Աշուտ երկաթի մահից յետոյ, երբ հաւատն էր կազմում բոլոր հոգիների էութիւնը և իր արտայայտութիւնը դառնում էր ամենից առաջ վանական և ճգնաւորական կեանքի մէջ^{*)}։

*) Կարգացում է առաջին անգամ Ազգապետական Ընկերութեան աշխատակիցների ժողովում 1916 թ. մարտի 9-ին. և հրապարակական նիստում նոյն թուի ապրիլի 6-ին։

**) Աշուտ երաջրը՝ Արսա Թաղաւորը (929—953 թ.), ըստ Մոսկովսկու Տաբնիցսկու, իր քաղցր բարբով և քաջազոր զօրութեամբ յաղթող է հանդիսանում շուրջմահի և մեր աշխարհի համար շինութեան և խղճազութեան պատճառ դառնում։ Ենայտ ժամանակի ծաղկեալ պայծառաւորը կարգ կրօնաւորական հանգիսից յաշխարհիս Հայոցն։ Ետո տեղերում շինում են եղբայրանոցներ և համախմբում են մեծ բազմութեամբ միաբաններ։ այսպէս՝ Կամբլուձորի վանքն Արշարունիքում, Հոռոմասի վանքն և Դպրեմանք Երեւանում, Խաւձորի վանք Դերձանում, Հնձուց վանք Կարինում, Մովսիսի վանք Կալբերգում

Մաղկում էր ճարտարապետութիւնը՝ քանդակագործութեան և նկարչութեան հետ։ Շինում և զարդարում էին բազմաթիւ եկեղեցիներ։ Վանքերը բոլորը լցում էին հարիւրաւոր աղամարդկանցով, որոնք կտրում էին աշխարհից և իրենց նուիրում բարեպաշտութեան գործին։ Աղբրում էին և Բարսեղի սահմանադրութեամբ, ոչ մի սեղանականութիւն չունէին։ Վեր նոցա ամենայն ինչ հասարակացք։ Իրենք իրենց ենթարկում էին ամեն տեսակ զրկանքների և նեղութիւնների։ Հագնում էին աղքատի նման գծուծ գրգիւկներ, մարմինները տանջում քրձով ու խորզով։ ման էին գալիս բորիկ ոտներով։ Վեղձազգեստ, խոնարհազարդ վայելչութեամբ զարդարեալք ի ճաշակա անճաշակ, մի անգամ միայն յաւուրն ճաշակելով և զովացեալ ջրով ի շարաթու և ի կիւրակէի արբամբ յաւուրս սուրբ քառասորդաց։ Ոչ ոք հասարակաց սեղանից դուրս բերանը բան չէր դնում, ոչ միւրդ և ոչ նոյն խկ դալար խոտ։ Այսպէս իրենց անձը չափազանց պահեցողութեամբ ճնշելով՝ իրենց զրկում էին և բնից. ամբողջ գիշերներ տքնութեամբ և հսկումով էին լուսացնում. որովհետեւ ցերեկը գործում էին ձեռքով և աղօթում, իսկ գիշերը սաղմոսում քցալապատարած բազկատարածութեամբ, արտօսելիչոյց ողբովք լցեալ զաւուրս։

Այս մարդիկը ամեն ինքնասիրական և մարմնական հոգսերից ազատ լինելով՝ միայն մի հոգս ունէին. որքան կարելի է, շատ տանջել իրենց և, որքան կարելի է, շատ զարդարուել ոգորմածութեան զարդերով։ Այդ պատճառով աշխատում էին, բայց իրենց աշխատածն իրենք չէին վայելում. այլ իրենց բոլոր ունեցածներն և աշխատածը բաշխում էին ուրիշներին. յաճախ երբ աղքատների էին հանդիպում, հանում էին իրենց հագի զգեստները և նրանց հագցնում. հանգստեան տեղ և սնունդ էին տալիս ամեն անցորդի ու ճանապարհորդի, որոնք կարող էին վանքերում օթևանել ինչպէս իրենց տանը։

Եւրոպայի վանք Վայոց Ձորում և Նարեկայ վանք Ռշտունիքում նոյն կրօնաւորական—չինարարական գործն աւելի մեծ եռանդով շարունակւում է և Առաքի յաջորդէ, Նրա որդի Առաք Գ.-ի օրով (953—978)։ Վաւուրս սորա չինեցան կրօնաւորանոցը, նզնաւորական տեղիք Սեորդեաց աշխարհիւ... որոց երկօցունց տեղեացնէ Հաղբաս և Սանահին... միակրօնք ի տան Առաւուժոյ՝ արանց չինդ հարիւրոց։ Բացի այդ՝ շինւում են նաև ուրիշ վանքեր, կամ հնեւր Նորդում. այսպէս, աւելի վաղ, Աղթամարի Ս. Խաչը, ու հիմքից վերաշինւում է Վասպուրականի Թագաւոր Գագիկը և մեծ շքեղութեամբ, քանդակներով ու պատկերներով զարդարում է ներսից ու զբախց։ Այսպէս շինւում են և ուրիշ վանքեր, և այս շինարարական գործը տեսւմ է մինչև 11-րդ դարու կէսերը։

Շատերն այսպիսի միաբանական նգնութեամբ չէին գոհանում, քաշոււմ էին ամայի լեռներն ու անտառները, միայնանում քարոնձանների ու խոռոչների մէջ, ուր անսուաղութեամբ ապրում էին օրերով և միայն աղօթքով էին պարապում գիշեր ցերեկ՝ «վերականգնելն խօսակից լինելով» ըստ Գր. Նարեկացու։ Այս նշանաւորական խօսակցութիւնն և աշխարհուրացութիւնը ծագում էր ժամանակի քրիստոնէական աշխարհայեցողութիւնից, որով իրական աշխարհը մի երազ էին՝ համարում, կամ ժամանակակից պատմաագրի խօսքով, «ստուեր զկեանս աշխարհիս համարելու»։ Իսկական կեանքը հանդերձեալ յաւիտենականն էր, որ մահից յետոյ զալու էր։ Դրան արգելք էր լինում մարմինը, ուստի և ձգտում էին քաղցով ու ծարաւով, «շանապաղա՝ մեռիկ կեանքով» մեռելի մարմինը, կենդանի մեռնել. «մեռնեալ ի կենդանութեան և ի մահու զկեանս քարոզեալ»։

Այս բոլորի հետ միասին՝ այդ մարդիկը հոգեպէս էլ հանդիսաւ չէին, այլ շարունակ տոնջւում էին իրենց երևակայութեան ասեղծած սարսափներով, ստատնայի փորձանքներով։ Չկար գիտութիւն, որ զսպէր նրանց երևակայութիւնը և հաւատարակը՝ աւթիւն մտցնէր նրանց կեանքի մէջ։ Արդարև վանահայրերը յաճախ լինում էին ունեալ մարդիկ. յիշում են և նշանաւոր գիտնական (վարդապետներ*), բայց նրանց ուսումնն ու գիտութիւնը սահմանափակուած է եղել հոգեւորով. նրանք նմատութիւն են ունեցել միայն Ս. Գրքի և ուղեւորական կրօնական գրականութեան, և նրանց դործն է եղել մի կողմից՝ խօսքով ուսուցանել կրօնական նշարաւթիւնը, քարոզել Աստուծոյ պապազանքը, միւս կողմից՝ աւելի մեծ խօսակցութեամբ բարի օրինակ դառնալ եղբայրներին իրենց նգնութեան մէջ։ Այսպէս «մեծանունն ի գիտութեան և յառաքինութեան Մովսէս, որ քառասուն աւուրքք ձգտեցուցանէր զանսուաղութիւնն»։ Եւ Դաւիթ աղքատակերպ և գծծասէր գիտնականն, որում տնուն Մաշկոտն կոչի, և Պետրոս հաւաստի մեկնիչ Դրոց սրբոց»։

Այս գիտնական վարդապետների մօտ ժողովում էին աշխարհի զանազան կողմերից բազմաթիւ ուսումնածաբաւ երիտասարդներ, որոնք ամենայն սիրով և ջանքով, տանելով ամենայն

* Այսպէս Կամբլաձորի վանքի վանահայրը՝ «մեծառօն Սամուէլ, բազմանորն ի գիտութեան Դրոց սրբոց և յերգեւորածաղկեաց»։ Մի ուրիշ, Քլաւսի վանքի վանահայր Բարսեղի համար գրում է Առդիկը, թէ լցնում էր «զամենեցուն զպապաւթիւն կամ զվերականգնութեան գիտնական և իմաստական նախորդ»։ Նոյնպէս և Թարբերդի Մովսէսովանքը նարեաւ է եղել «բազմապայծաւ և բանական իմաստնալը»։ Այսպէս և Դպրեվանքը։

զրկանքներ, աշխատում էին ուսում ձեռք բերել, և ձեռք բերածները լինում էր ծանօթութիւն ս. Գրքերի, սքոլաստիկական նըրբամիտ մեկնաբանութիւններ ու դաւանաբանական վէճերի մասին տեղեկութիւններ: Նրանց մի մասը Յուն էր հենց վանքերում՝ նուիրուելով ճգնական խստակեցութեանը. իսկ ուրիշները վերադառնում էին աշխարհային կեանքին, կամ դառնում էին քահանայ, և իրենց ամբողջ կեանքում շարունակում էին որոշաւ իրենց ձեռք բերած ուսումը՝ և տարածել աշխարհում, ու միշտ երանի էին տալիս իրենց երիտասարդական վանական կեանքին:

Եւ ահա այսպիսով եկեղեցու բնից քարոզով և վանական կրթութիւն ստացած աշխարհականների միջոցով ճգնաւորական աշխարհայեացքը թափանցում էր և աշխարհականութեան մէջ: Եւ եթէ ազնուականը մի կողմից սանձարձակ ազատութիւն էր էր առլիս իր անասնական կրքերին՝ զրկում ու կեղեքում էր, դուարճութեան, կերուիւումի, գանձի ու հարստութեան ետեւից էր ընկնում, միւս կողմից սակայն նա անձնատուր էր լինում նաև կրօնական բարեպաշտական գործերի՝ եկեղեցուն նուէրներ տալ, աղօթել, եկեղեցի յաճախել, աղքատներին խնամել և նոյնիսկ Աշոտ Գ.-ի պէս ողորմածութեան գործերով զբաղուել: Հնչուութեամբ մի ծայրայեղութիւնից միւսին էին անցնում: Մի ծայրայեղութիւնը ժառանգաբար բերում էին կոպիտ, բարբարոսական բարբերի շրջանից, որ և պաշում էին դրացի հեթանոս ազգերի ազդեցութեամբ, իսկ միւսն արդիւնք էր վանական-ճգնաւորական ազդեցութեան: Եւ այս ազդեցութիւնը ոչ միայն բարձր դասակարգի՝ թագաւորների և ազնուականների վրայ էր երևան գալիս, այլ և ռամկի, և ազնուական ու ռամիկ հաւասար պատկառում էին կրօնաւորներից, որոնք և սուրբ և հրաշագործ էին:

Ժամանակի անտոխապաշտական ոգին ճգնաւորներին դարդարում էր հրաշալի պատմութիւններով, մէկը, Կարմիր Հայր, մի աւերակ եկեղեցու մէջ աղօթքով սաակեցնում է մի վիշապ, որ շրջակայ բնակիչների համար սարսափ էր դարձած. մի ուրիշը, Վարդիկ Հայր, հնազանդեցնում է առիւծին, որ բերում է նրան եղջերուների կաշի և իր երկու կոյր կորիւններին նրա առաջն է ձգում. սուրբը ձեռք վրան զնելով բռնկում է նրանց կոյր աշքերը: Այսպիսի կրօնաւորների ազօթքն եթէ հրաշագործ էր, դարձուելի էր անէծքը, որ հաւատում էին թէ անպայման պիտի կատարուի: Նրանք գրանով իշխում էին ռամկի և ամենքի մտքի ու երևակայութեան վրայ: Այդ անէծքն է որ զրգում է բազմամարդ Անի քաղաքի ամբօխին և ստիպում Գագիկ թագաւորին

գերեզմանից հանել իր նոր թաղած եղբոր՝ Սմբատ թագաւորի գինը:

Այս կրօնաւորական ոգին բացի վանական, ճշնաւորական և բարեպաշտական կեանքից՝ ունէր նաև իր գեղեցիկ արտայայտութիւնը գեղարուեստի միջոցով: Մեր եկեղեցական հարտարարականութեան ու քանդակագործութեան մնացորդները, որ այժմ հիացում են պատճառում մասնագէտներին և մեր հին մշակոյթի պարճանքներն են, աղագայի ուսումնասիրութեամբ պիտի ցոյց տան այն սերտ կապը, որ եղել է ժամանակի ոգու և իր այդ արտայայտութեան մէջ: Նոյն դարում ծաղկել են նմանապէս և նկարչութիւնն ու երաժշտութիւնը, որոնցից ժամանակը մեզ ըսն չի թողել, բացի աւելի ուշ դարերի մանրանկարչութիւնից և խաղերով շարականներից, որոնք դեռ անվերածանելի են:

Շատ աւելի բախտաւոր չի եղել և բանաստեղծութիւնը, որից մնացել են միայն Գրիգոր Նարեկացու մի քանի տաղերը և Ողբերգութիւնը: Բայց այդ քչի մէջ էլ արդէն տեսնում ենք, որ մինչ շարականները (*) զուրկ են ինքնուրոյնութիւնից և կեանքից ու ընտելիւնից, այժմ մի իսկապէս քնարերգութիւն է առաջ գալիս, որ մի կողմից՝ երգչի իրեն սիրտն է բաց անում մեր առաջ, միւս կողմից՝ իր մէջ անդրադարձնում է հե՛ց այդ կրօնաւորական ոգին, որ ունեցել են հազարաւորներ ու բիւրաւորներ: Գրիգոր Նարեկացին մեր առաջին մեծ բանաստեղծն է:

Բ.

Դժբախտաբար Գր. Նարեկացու կենսագրութեան մասին շատ քիչ տեղեկութիւն ունինք: Նա եղել է կրօնաւոր Նարեկայ վանքի, որ ըստ Ստեփանոս Տարօնեցու նշանաւոր է եղել Քրազմազարդ պաշտօնապայծառ երգեցողովք և գրական գիտողօք: Երգիչ և գրագէտ Գրիգորի անունը սակայն չի յիշատակում ժամանակակից պատմագիրը. որովհետև այն միջոցին երբ Ասողկը իր Տիեզերական պատմութիւնը վերջացնում էր, Գրիգորը դեռ նոր էր յօրինել և հրատարակել իր Ողբերգութիւնը, որ-՞վ իսկապէս հռչակում է նա:

Նրա հայրն էր Խոսրով Անձնացեաց եպիսկոպոսը **, ժամանակի նշանաւոր անձերից մէկը, հմուտ եկեղեցական գրքերի, գիտուն մի մարդ, որից մնում են Մեկնութիւն ժամակարգութեան

*) Շարականների մասին տես Մ. Արեղեանի Վերուսգծեր Հայոց Գրականութիւնից, Արարատ տպագիր 1912, № № 7—8, 9, 10—11, 12:

**) Տես Երզնց Երգի մեկնութեան յիշատակարանը, Գրիգորի Նարեկացւոյ Մատենագրութիւնը, Վենետիկ, 1840 եր. 397:

և Մեկնութիւն Խորհրդոյ սրբոյ պատարագին: Վերջինիս յիշատակարանի մէջ ինքը Գրիգորն աշակէս է գրում իւր հօր մասին. «Ծնորդիւն Աստուծոյ եղև մեկնութիւն այսմ գրոց ի ձեռն Խորհրդայ Անձնացեաց եպիսկոպոսի, յոյժ հետեղի պատուիրանացն Աստուծոյ. զոր մեզ և գովել անճա՛հ է, զի մի գայթակղեսլիք ի նոյն՝ վասն գոլոյ նորին հայր իմ ըստ մարմնոյ. որոյ չեմ արժանի կոչիլ որդի և ոչ վարձկան ըստ գրեցելումն... Այլ յոյժ ամաչեցեալ և տարակայ գտանիմ նս Գրիգոր պարտաւոր պատուիրանաց սուրբ Գրոց: Արդ առաջին սուրբ գրոցս աշտորիկ զծագրութիւն եղև ձեռամբ Սահակայ որդւոյ տեառն Խորհուրդ, այս գրոցս մեկնողի ՅԴՊՊ թուականութեանս Հայոց» (==Քրիստոսի 950 թ.):

Չամչեանը Գրիգորի ծննդեան թուականը դնում է ժողովուրդայէս 951 թուին. լի թուին Հայոց իբր ն, այսինքն յամի Տեառն 951 չ: Այս ենթադրական տարին ուրիշներն այնուհետև բանեցնում են իբր հաստատուն թուական Գրիգորի ծննդեան համար: Բայց որովհետև, ինչպէս վերևում դրուած յիշատակարանից երևում է, նրա հայրն 950 թ. պատարագի խորհրդոյ մեկնութեան տարում. եպիսկոպոս է եղել, ուստի և Գրիգորը պէտք է ծնուած լինի այդ թուից առաջ, քանի որ շահնար է 10-րդ դարում կանամբի եպիսկոպոս ենթադրել Հայաստանում^{*)}: Դժբախտաբար կարելի չէ որոշել, թէ 950 թուից որքան առաջ ծնած պիտի լինի նա: Նրա հայրը Անձնացեաց եպիսկոպոս է դառնում 941 թուից ոչ առաջ, որովհետև նա այդ վիճակն ստանում է Անանիա Մոկացի կաթողիկոսից (941—965 թ.)^{**)}, ենթադրելով որ Գրիգորը մի տարեկան մատղաշ երեխայ է եղել հօր ձեռնադրութեան ժամանակ և որ հայրը ձեռնադրուել է Անանիա Մոկացի կաթողիկոսի առաջին տարում, ըստ այսմ Գրիգորը ծնուած կարող է լինել 940 թուին, իսկ ամենից ուշ 949 թուին. որովհետև հայրը 950-ին արդէն եպիսկոպոս է յիշուում: 940 թուից շատ առաջ չի կարելի դնել Գրիգորի ծնունդը, որովհետև նա իր Ողբերգութեան մատենանի մէջ ինքն իրեն 1001 կամ 1002 թուին, թէպէտ հասակն առած, բայց ծեր չի համարում: Այսպէս 83-րդ բանի մէջ գրում է. «Ահա բարդեցան, կուտեցան շրջանակք ամացս ընդունախութեան, յորմէ հետէ յայտնեցեալ ցուցայ՝ յոչպէտս հրեալ ի յարգանդէ մօրն իմոյ սենեկի փուշս դժնկի մեղաց շառաւիղիս: Բայց 87-րդ բա՛ի մէջ գրում է.

*) Աբարբառ. 1897, եր. 93, յօդուած Գ. Տ. Մկրտչեանի:

**) Նոյն, եր. 91.

«Եթէ հասից յամս ծերութեան քն առաջնորդեալ արժանիս մահու, մի թողցես զտկարութիւնս, մի անարգիւր զալիսն, մի կորացուցես զկործանեալն, մի զիջուցես զկեանքն... Ենթադրելով որ նա ամենից ուշը 949 և ամենավաղը 940 թ. ծնուած լինի, այս խնդրուածքն անելիս (Ողբերգութեան այդ բանը զրուած է 1001 կամ 1002 թուին) նա պէտք է լինէր 53—62 տարեկան: Եթէ 62 տարեկանն արդէն ձեր պիտի համարուի, 53—55 տարեկան հասակին կարող էր նա իր համար զրել «Եթէ հասից յամս ձերութեան»... Այսպէս նա ծնուած պիտի լինի 940-ական թուականներին, աւելի շուտ այդ թուականներին երկրորդ հնգամեակին:

Գրիգորը մեծացել է Նարեկայ վանքում. «Մնեալ և վարժեալ սրբութեամբ և իմաստութեամբ առ ոտս Անանիայ վարդապետի, առաջնորդի Նարեկայ վանից ի Ռշտունիս»^{*)}: Այս տեղեկութիւնից երևում է, որ հայրը հայկական դասնալով իր որդուն փոքր հասակից արդէն յանձնել է Անանիա Նարեկացուն, որի հզօր դասեր որդին էր Գրիգորը, ինչպէս յիշում է ինքը Ապարանից Խաչի և Աստուածածնի Ներբողների վերջում (հր. 422). «Ես Գրիգոր՝ յետին վարժապետաց և կրսեր բանասիրաց, որդի դասեր հզօր Հօր Անանիայի հոգեպարզ և մտավարժ փրկստփայի և ըստ վարուց մարտութեան կրօնից զօգելոյ և հռչակելոյ»:

Գրիգորի հետ նոյն վանքում կրօնաւորել է և իր մեծ հզօրայրը՝ Յովհաննէս, որի համար նա մեծ զօգնատու է խօսում իր գրուածքների յիշատակարաններում. «Յիշատակեցես... զիս և զհզօրայրն իմ, անդրանիկ զՅովհաննէս ցանկալի անուն ի միում կարգի, որ զիտեականն է և հանճարեղ իմաստասէր քան զիս առաւել յամենայնիս (Յիշատակարան Ներբողի ապարանից Խաչի): Իսկ Ողբերգութեան մատենան զերջում զրում է. «Ես Գրիգոր կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսաց և կրտսեր վարժապետաց, զորժակցութեամբ հզօր իմոյ ընտրելոյ Յովհաննէս կոչեցելոյ՝ Նարեկայ մեծափառ և բարձրադասիւ ուխտի վանականի, որք իբրեւ զմի մարմին բանական ի յերկուց առ մի կերպարան շինելոյ զիմաց կենցաղավարելով, ոչ միայն հառադատք, այլ և միաշունչք, միակրօնք, համադատիւք, զուգահաւանք, ի բառից աչաց առ միննոյն շաւիղ խորհրդոց տեսալք» (հր. 268):

Այս սիրով սերտ կապուած եղբայրների ուսուցիչը, Անանիա Նարեկացին, որ ապրել է մինչև Խաչիկ կաթողիկոսի (972—991 թ.) ժամանակները^{**)}, եղել է իր ժամանակի համբաւաւոր և զի-

^{*)} Յայտնուրք, Կ. Պոլս 1834, հր. 99:

^{**)} Ուխտանէս, Էջմիածին, 1874, հր. 11:

տուն, միաժամանակ և մեծ կրօնաւորներէց: Ստ. Տաթևեցիին (եբ. 178) նրա համար գրում է. «Փիլիսոփայն մեծ... սորա և գիրս է ասացեալ ընդդէմ աղանդոյն թոնդրակաց և այլոց հերձուածոց»: Նա եղել է քաջ մեկնիչ Ս. Գրքի, գրել է յինչոթ թիւններ և հառեր՝ Վասն աղօթից, պաշտոն և արտասուաց, Վասն զղջման և արտասուաց և աղօթից, և մի ուրիշը՝ «Թրատ հոգեորթէ որպէս կարասցէ մարդ որոշել զմիտս յերկրաւորաց» և զայս կեանս արձամարնել և Աստուծոյ միայն ցանկալ և արքայութեան նորաց:

Գրիգորը փոքր հասակից մեծանալով այսպիսի մարդու ձեռք տակ, որ խօսքով ու գործով քարոզում էր ուրանալ աշխարհը, յաղթել աշխարհին և ոչ ըմբռնել ի կենցաղոյս պատրանս, բնականաբար պիտի կտրուէր դրսի աշխարհից: Նա կտրուած էր և ընտանեկան կեանքից. մօր երես, անշուշտ, տեսած չէր, կամ շատ փոքր հասակում տեսած, իսկ հայրն իր մօտ չէր ապրում: Եւ եթէ մէկ մէկ նա հանդիպում էր հօրը, նրա մօտ էլ նոյնն էր տեսնում ու լսում, ինչ որ վանքում,—ժամագիրք, սաղմոս ու հոգեոր երգ, և զղում, լաց ու արտասուք: Նա արտաքին աշխարհին ծանօթանալու առանձին հնարաւորութիւն չունէր, բացի ուխտերից և բացառիկ այցելութիւններից, բնականաբար նրա ուշն ու միտքը պիտի ուղղուէր միայն մի բանի—հետեւել և սիրել տալ, ինչ որ իր շուրջը տեսնում էր վանքի կրօնաւորների մէջ: Եւ նա մեծանալով մեծ էր նոյն վանքում, ուր կրթուել էր. կրօնաւորում է և ձեռնադրում քահանայ. Հայոց ՆԻՋ—Փրկչի 977 թուին նա ինքն իրեն արդէն քահանայ է յիշում Երզնգի մեկնութեան յիշատակարանի մէջ: Մնալով վանքում՝ նա ճգնարանի նոյն խոտութիւններին է ենթարկում իրեն, ինչ որ ուրիշները. ցերեկը գործել մշտամուռն աղօթքներով, գիշերը տքնել դարձեալ աղօթելով. տանջել իրեն քաղցով ու ծարաւով, ծունրադրութեամբ երկրպագութիւններ անելով. լծայն հոռաշանաց, ռաջ կողկողագիւնք, արտասուք ողբոց, լծակովքն հաստատութեամբ իրր գարշապաշաւ ոտին վարել, —ա՛հ թէ ինչով էր զբաղւում նա իր կեանքում:

Սակայն Գր. Նարեկացու հայրն ու վարդապետը միայն սոսկ կրօնաւորներ չէին. նրանք իրենց ժամանակի նշանաւոր գիտնականներն ու գրագէտներն էին. և Գրիգորի պէս ընդունակ մէկը մանուկ հասակից արդէն, աչքի առաջ ունենալով նրանց օրինակը, սիրում է ոչ միայն կարգալ և ուսման ու իմաստութեան եռակից լինել, այլ և շարագրել: Եւ իսկապէս, Գրիգորը խորը հմտացած է ժամանակի գիտութեանը, ընդարձակ ծանօթութիւններ ունի ոչ

միայն ս. Գրքի, այլ և եկեղեցական գրուածներէլ նա այդ հաւութիւնը ձեռք է բերել տուուն ընթերցանութեամբ. Մովսէս Ստեփանոս կալսկնապետին գիմնելով նա ասում է. «Եւ ինձ տառապելոյս օղնեան աղօթիք, որ յարաժամ զեղերիմ յընթեանունս (Եր. 423)»:

Այդ ճգնաւորութեան և գիտնականութեան համար է անշուշտ, որ նա կարգուում է, ըստ Յայմաւուրքի, Նարեկայ վանքում վարժապետ միանձանց ի սուրբ վարս և յաստուածային դիտութիւնս: Նա ինքն իրեն անւանում է «յեռան վարժապետաց և կրտսեր բանասիրաց» (Եր. 422), «յեռան բանախառաց և կրտսեր վարժապետաց» (Եր. 268): «Զայլս խրատեմ և ես ինքն անփորձ եմ. միշտ ուսանիմ և երբէք ի ճշմարտութիւն գիտութեան ոչ հասնեմ», ասում է նա համեստութեամբ (Ողբ. բան 2Ա. Եր. 182): Անս մի կեանք, որ անցել է ամբողջ աղօթելով. յարաժամ կարդալով և միշտ ուսանելով և ուսուցանելով ու խրատելով ուրիշներին, միաժամանակ և բանահիւսելով:

Այսպիսի մի կրօնաւորը չէր կարող վարժապետութիւն ստացած չլինել: Ողբերգութեան 2Ա. բանի մէջ, Եր. 186, նա գրում է իր համար՝ թուելով իր կոչումները. «Պետ վարժից կոչեցայ յանձինս դատախազ, ուրբի ուրբի անուանեցայ և զգովեալս առ Աստուած եղծի. ըստի ասացայ առ եղևութեանն ժառանգութիւն. սուրբ վկայեցայ ի մարդկանէ, որ եմ անմաքուր առաջի Աստուծոյ. արդար դաւանեցայ ամենայն իրօք ամբարիշտս. հեշտացայ ի գովեստ մարդկան, զի ծաղր եղէց յատենին Քրիստոսի. յաւազանէ կոչեցայ արթուն, և ես ի քուն մահունջեցի. ի փրկութեանն աւուր հսկող յորջորջեցայ. բայց զգաւստութեանն աչս կափուցիս: Այս վկայութիւնից իմացում է, որ Գրիգոր (=Արթուն) եղել է նրա մկրտութեան անունը, որ նա վարժապետ (=ուրբի) է եղել, և բացի վարժապետ (կամ պետ վարժից) կոչումից՝ յորջորջուել է նաև հսկող, անշուշտ զիշերային տընութիւնների համար. նա ինքն իրեն «սկող է կոչում նաև Ողբերգութեան ամեն մի բանի վերնագրի մէջ, Բացի այդ՝ մարդիկ գովել են նրան ինչպէս մի բարի, սուրբ և արդար մարդու: Նա այդ գովեստը իրօք ստացել է մարդկանցից, որոնց խիստ հանելի է եղել իր վարքով, և նրան իր կենդանութեան ժամանակ նոյն իսկ երանի են տուել. և Առ պարտաւոր զերիս ողջմիտ կամօք ակնարկեն, որպէս թէ ի մասանցդ քո կեցուցեաց ի պաշտօնաւորան հոգւոյս ծածկութի լիով ունիցիմ... Եւ որպէս չուք իմն վայելական զնել ախորժեն ինձ անարժանիս սիրելիքն քո վասն քո՝ նայեցեալ ի կրօնս զգեստուս բարեկերպութեան,

չգիտելով զրիժս զազոնեացն՝ երջանիկ կարգան եղկելոյս (Բան 24. եր. 233):

Սակայն Նարեկացին ունեցել է նաև թշնամիներ ու բամբաստաններ եւ Յայտաւուրըն գրում է թէ «Որովհետեւ նա ամենայն փութով աշխատում էր ուղղել եկեղեցու խանգարուած կարգաւորութիւնը, ուստի մի քանի յաշարկոտներ չարախօսեցին նրա մասին եպիսկոպոսներէ և իշխաններէ մօտ, և այդ ճշմարտութեան վարդապետին կոչում էին ծայթ և հերձուածոգոյ: Եւ ապա պատմում է Նարեկացու մասին տարածուած զրոյցը, թէ ինչպէս իշխաններն ու եպիսկոպոսները հաւաքուելով՝ ուղում են նրան դատի մատնել: Հրաւիրակներ են ուղարկում սրբի մօտ, որ նրան աւան, դատարան տանեն: Նա հեղութեամբ ընդունում է եկողներին և ճանապարհ ընկնելուց առաջ հացի հրաւիրելով նրանց՝ առաջները զնում է երկու խորոված աղանի: Օրն ուրբաթ է: հրաւիրակները յիշեցնում են այդ մասին Նարեկացուն: Սուրբը ներողութիւն է խնդրում, որ մոռացել է, թէ օրը պատ է, և ասում է, որ իր հիւրերը հրաման տան աղանիներին թռչելու: Հիւրերն, ի հարկէ, այսպիսի բան անել չէին կարող. բայց ինքը Նարեկացին հրամայում է, և աղանիները կենդանաւորով թն են աւնում, թռչում: Բնականաբար սարսափում են եկողները, իրենց աչքով տեսնելով Նարեկացու սրբութիւնը, և ամբաստանութիւնն ի դերն է եկում: »)

Թէ իրօք նա թշնամիներ էլ է ունեցել, այդ երևում է Ողբերգութիւնից. նոյն 24. բանի մէջ նա բարեկամներից առաջ յիշատակում է թշնամիներին. «Յիշեալ յայտ Ողբերգութեան, մատենի բաժնի խոստովանութեան և զոր ի մարդկային ազնէ զթշնամիս մեր՝ ի բարի... Մի բարկացիս նոցա վասն իմ, Տէր, իբրև զսուրբս բամբաստողաց՝ առ յանախ սիրոյդ որ յիս, այլ որպէս զչարս կշտամբողաց և իրաւամբ նախատողաց՝ ներեան յանցանաց նոցա: Եւ արդ մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քո, Արդարադատ, ոմանք առ մեզ ֆրասակարագոյնք սակաւութ, թերևս և յիրաւի բամբասելոցս... մի սատակեացես զիման խոծանողսն» (եր. 291): Թէ ինչու են թշնամացել և բամբասել նրան, այդ չի իմացւում նրա մատենից. անհաւանական չէ Յայտաւուրքի հաղորդածը, թէ նրան ամբաստանում էին իբրև հերձուածոգի: Նրա հայրը, Խոսրով Անձնացեաց եպիսկոպոսը իր ձերբու-

*) Այս զրոյցն այժմ ևս իբրև մոզոմբղական երգ տոււած է Նարեկացու վրայ ուրիշ երգերի և զրոյցների հետ, որոնց բոլորի մէջ փոփոխուած է սուրբն իր հրաշագործութիւններով: Տես Գրեգին Ս. Յովսէփեանի «Փշրանքներ»:

թեան հասակում բանադրուած է իրեն ձեռնադրող Անանիա Մոկացի կաթողիկոսից իրեն հերձուածող, և այդ բանադրանքի տակ էլ մեռնում է. նրա ուսուցիչ Անանիա Նարեկացին, ինչպէս իր Խոստովանութեան Գրքից երևում է, չմերձ ի մահ վիճակում, ոչ ինքնաբերաբար, այլ կատարելով կաթողիկոսի հրամանը՝ անիծել է թոնդրակեցիներին, ամենայն հաւանականութեամբ այն պատճառով, որ Խոսրով կողակողոսի և կաթողիկոսի միջև տեղի ունեցած վէճերից յետոյ՝ «կարող էր կասկած ծագել և Անանիա Նարեկացու ուղղափառութեան մասին, քանի որ խնամիական կապեր կապեր կային սրա և Խոսրովի միջև և Անանիա Նարեկացուն էր աշակերտում Խոսրովի որդին պատանի Գրիգորը» *): Շատ հաւանական է, նոյն կասկածն եղել է և Գրիգոր Նարեկացու մասին քանի որ սա էլ զրած ունի թուղթ ընդդէմ թոնդրակեցի աղանդաւորների **):

Գր. Նարեկացու կենսագրութիւնից էլ ուրիշ հաւաստի բան չգիտենք, և հաւանօրէն շատ բան էլ չի պակասում, նրա կեանքն անցել է շատ միապետակ. աղօթել, կարդալ, գրել, դաս տալ, խրատել, և ապա դարձեալ աղօթել ի խորոց սրտի. Շատ միակերպ մի կեանք, որ թւում է թէ ձանձրալի պիտի լինէր մի մարդու համար, որ վերին աստիճանի զգայուն սրտի տէր է, գիտէ յուզուել աճեն մի ինչին բանից, որ ամբողջապէս եռանդ ու գործունէութիւն է շնչում, և որի վառ երևակայութիւնը մի վայրկեանում տանում է նրան զանազան կողմեր իր ճշմարտնի պատերից դուրս։ Բայց նա մանկութիւնից միայն մի աշխարհ է ճանաչում—իր ներքինը, իր սիրտն ու միտքը, իր հոգին ու հայեցողական կեանքը, որով և նա շարունակ զբաղուած է, և այդ՝ բաւականութիւն է տալիս նրան։ Եւ եթէ մէկ մէկ ձանձրանում է նա, բաւական է, որ աղօթէ Աստուծուն, և ահա նոր ոյժ ստացած, նոր եռանդով կարող է շարունակել իր մենաւոր և վարդապետական կեանքը. «եթէ ի տխրանաց ինչ ձանձրութենէ ոք նուազեցի, կանգնեցի վերստին հաստարանաւ այս հոռաշանաց ի քեզ յուսացեալս (Ողբ. Բան Գ. եր. 9)։

Գր. Նարեկացու մահուան տարին նոյնպէս յայտնի չէ։ Չամչեանը նրան մեռած է գնում մօտ 50 կամ 52 տարեկան հասակում Հայոց ՆՄԲ թուականին փետրուարի 27-ին, Փրկչի 1003 թուին. իսկ Զարբանեկեանը նրան մօտ 60 տարեկան է մեռած համարում, հասցնելով նրա կեանքն ուրեմն մօտաւորապէս մինչև 1011

*) Արարտ, 1897 եր. 94.

**) Հրատարակուած Բազմովէպում, 1893 թ.:

թուականը. քանի որ նրան ծնունդ գնում է 931 թուականին: Փետրուարի 27-ն առնուած է Յայսմաուրբից. իսկ թէ որտեղից են առնուած նրա տարիքն ու մահուան ենթադրական թուականները, այդ յայտնի չէ: Նա թաղուած է Նոյն Նարեկայ վանքում, Սաղուխա կոյսի եկեղեցւոյ մօտ, ըստ Յայսմաուրբի: Նոյն տեղում այժմ ևս ցոյց են տալիս նրա դերեզմանը, որ ուխտատեղի է: Ժողովուրդը մինչև այժմ պատմում է և երգում է նրա հրաշագործութիւնների մասին: Այսպէս՝ պատմում են, թէ նա մի օր առանձնանում է մի քարայրի մէջ աղօթելու և այլևս դուրս չի գալիս: Երկար սպասելուց և որոնելուց յետոյ, երբ մտնում են Նոյն քարայրը, այնտեղ մարդ չեն գտնում: Այն ժամանակ պաշտօնի և աղօթքով խնդրում են Աստուծուն, որ նրա տեղը ցոյց տայ, և հրեշտակն իջնելով յայտնում, թէ սուրբն Աստուծոյ մօտ է բարձրացած: Ժողովուրդի հայեացքով այդպիսի մեծ սուրբը չի կարող մեռնի: Նա որ իր անառատ կեանքով մի մարմնաւոր հերիշտակ է երևացել, այժմ էլ դեռ կենդանի է:

Գ.

Գր. Նարեկացու օրրութեան մասին զրոյցները իր ժամանակից են հենց գալիս, և այդ զրոյցները ծագած են նրա սրբականաց վարքի համար. բայց յետագայում, աւելի նրա գրական ժեն վաստակի և մանաւանդ Ողբերգութեան մատենանի համար է, որ ժամանակակիցների և յետնորդների աչքին իբրև մի հրաշալիք է երևացել: Մենք մինև այժմ դժբախտաբար չենք կարող տեսլ, թէ նրանից որքան երկեր են մնացել: Յայտնիները հետեւեալներն են՝ 1. Գանձեր (Խուով երեք), 2. Տաղեր՝ ու մեղեդիներ (քսանից աւելի), 3. Մի թուղթ թոնդրակիցների դէմ, 4. Մեկնութիւն Երգոց Երգոյն: Գրուած Վասպուրականի Գուրգէն թագաւորի հրամանով Հայոց ՆիՋ=Փրկչի 977 թուին, 5. Պատմութիւն Ապարանից Խաչին և Ներրող Ս. Խաչի և Ներրող Ս. Աստուածածնի, որոնք գրուած են Մոկաց եպիսկոպոս Ստեփանոսի խնդրով 389 թուից յետոյ և Ողբերգութիւնից առաջ, 6. Ներբող Առաքելոս, որ գրուած է Ողբերգութիւնից առաջ, 7. Ներբող Ս. Յակոբայ Մծնայ Հայրապետին, 8. Մատենան Ողբերգութեան, որ մեր բնաստեղծի ամենամեծ երկն է:

Ողբերգութեան վերջում կայ հետեւեալ յիշատակարանը. «... ի յաւարտումն կատարման իննեւերեակ յօրելիսին, ի սկիզբն պատկիւոյ մօր տաանեկին յաբեթական տոհմիս տուժարի, յետ երից ամաց անցելոց որ զկնի գալստեան ի կայս և ի կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արեւելից՝ յաղթող և մեծ կայսերն Հռոմոց Բասիլի, յորժամ ընդարձակ և մակագալիթ կանոնաւ սփիռ տարածէր... տնթարթափ վերաշացեալ ի յաջ և յահեակ՝ սեպանկա-

նել յաւելուլ բաժինս մասանց վիճակաց խմբից աշխարհաց ի ծոց իւր, արդ ի յայնմ անդորրութեան միջոցի, յորում եղբւրնալ ընդոտնեցաւ թշնամիք եկեղեցւոյ, ստացեալ հիմնեցի կառուցի... զբաղմաստեղնեան զրուագս զրութեան այսմ սոգիերի արգասաւորի, եւ Գրիգորա... Իններորդ յորելեանի վերջը հայոց 450 թուականն է, իսկ տասներորդ յորելեանի սկիզբը 451 թուականն, որ սոժորական հաշուով անում են Փրկչի 1001 և 1002 թուականները: Անշուշտ բանաստեղծն իր այս մեծ երկը չէր կարող կարճ ժամանակում գրել. ուստի և իններորդ յորելեանի վերջը և տասներորդ սկիզբն ասելով չպէտք է հասկնալ իրրեւ հայոց 450 թուականի վերջը և 451-ի սկիզբը, այլ իններորդ յորելեանի (յիսնամեակի) վերջին տարին և տասներորդի առաջին տարին. ուրիմս հայոց 450 և 451 թուականներին: Այս համապատասխանում է և Նարեկացու հետեւալ ժամանակագրութեանը. «Յետ երից ամաց անցելոց, որ զկնի զայստեան... կայսերն Հռոմոց Բասիլն, Արդ, Ստ. Տարծնեցին զգալն Վասիլ թագաւորին Յունաց յաշխարհն Արեւիյիցն զնում է հայոց 449 թուին, որ է Փրկչի 1000 թուականը: Այս թուականի Չատկի օրը մեռնում է Դաւիթ Կիրապաղատը, որ իր աշխարհը թողել էր Վասիլ կայսրին, և կայսրը Կրիկիայի Տարսոն քաղաքում լսելով այդ՝ շտապով գալիս է տիրելու: Կիրապաղատի երկիրներին: Եւ անցեալ թագաւորն ընդ Հանձիթ և ընդ Բալու՝ ելանէ ի լեռոն Կոհերայ, — յաւուր վարդափառի տօնին, — որ ընդ մէջ Հաշտենից, Ծոփաց և Խրճենայն ²): Ապա նա դալիս, բանակ է զնում Վաղարշակեայ քաղաքի մօտ: Բոլոր մանք թագաւորներն և իշխանները սարսափած զնում են նրա բանակը, բացի Հայոց Գաղիկ Բագրատունի թագաւորից. զնում են նոյնպէս երկու Արծրունի եղբայր թագաւորները, Սեներերիմ և Գուրգէն: Եւ արքունատուր ընծայիւք պատուեալ ի նմանէ, — զրում է Ասողիկը, — առատաձեռն ոսկով և արծաթով և հրովարտակ առաքեալ առ մերձաւոր ամիրայան Տաճկաց, զի մի մեղիցն աշխարհին Վասպուրականի՝ զաղաքեցոյց զառ և զգերութիւն և զհարկապահանջ բռնութիւնն: Կը նշանակէ Վասպուրականի թագաւորները նեղուելիս են հղել սահմանակից մահմեդականներից, և նրանց նեղութիւնը զազարել է, և երկիրը խաղաղել է միայն կայսրի ահից: Այդ անդորրութեան միջոցին աւա Գր. Նարեկացին 1001 թուին սկսում և 1002 թ. վերջացնում է իր Ողբերգութիւնը կայսեր դաւուց երեք տարի յետոյ. և որով-

²) Ստեփանոսի Տարծնեցւոյ Ասողկան Գառմ. Տիեզ. Գեոքքորոյ 1883, էր. 276.

հետև կայսրը 1000 թ. ամառն է եկել, ուրեմն 1002 թ. ամառ-
ուանից յետոյ *),

Գրիգոր Նարեկացու գրական երկը՝ իբր առաջին շրջանում՝
նիւթով և ձեռով նոյն է նախորդ դարերում և իբր ժամանակ դար-
գացած գրականութեան հետ. մեկնութիւն, ներբողեան և հոգեւոր
երգ, Երգոց Երգի մեկնութեան մէջ, օրինակ, նա առանձնապէս
չի տարբերում նախորդներից, բայց եթէ իբր համեմատաբար
պայծառ ու գեղեցիկ մտածութեամբ. Նոյնն է և ներբողեանների
մէջ։ Ս. Քաչի ներբողեանն, օրինակ, սկզբում խաչի զօրութեան
մի սքոլաստիկական աղբորական մեկնութիւն է, ձեւերն ու նիւթը
մեծ մասամբ նախորդներից մշակուած։ Հին ճառերի ու ներբո-
ղեանների երկարաբան արուեստակեալ լեզուն ու ճոռոճ արտա-
տութիւնը գտնուած ենք և Նարեկացու մէջ։ Ներբողեանների մէջ
կար և քնարական մաս, որի մէջ կէս բանաստեղծական և կէս
նարտասանական ձեռք գտնուած էր ներբողիկ տնձր. այստեղ
արդէն մեր բանաստեղծն ազատ է զգում իրեն, և նրա ներբողեան-
ներն այս մասի մէջ դառնում են երբեմն օրհնաբանական բանաս-
տեղծութիւններ, նոյն իսկ ռոմանտորով յօրինուած։ Բայց ինչպէս
էլ լինի, դրանք իսկական բանաստեղծական ներշնչման արդիւնք
չեն, այլ յօրինուած են ուսուցական նպատակով։

Նրա գանձերը, թուով երեք, որոնց տներն գլխադրերը կազ-
մում են «Գրիգորի երգ» գլխաբանը (ակրոստիխ) *), սկսւում են
զանձ բառով, իսկական գանձ (փող, հարստութիւն) բառի նշա-
նակութեամբ. դրանք առնի օրուայ յատուկ մաղթանքներ են
ուղղուած Ս. Հոգւոյն, եկեղեցուն ու Ս. Քաչին, աւելի դաւանա-
բանական բովանդակութեամբ, որոնց մէջ առանձնապէս խնդրո-
ւածքներ են լինում քահանայապետի և եկեղեցական դասի հա-
մար, նոյնպէս և վարժապետների ու թագաւորի համար իբր զօրա-
պետներով ու զօրքերով։ Առանձին շնորհք չի երևում նաև այս
գանձերի մէջ, որոնք հետաքրքիր են միայն իրեն ժեր տմե-
նահին յատուկ մաղթանքները։

Իսկական բանաստեղծ Նարեկացին երևում է միայն տա-
գերի և Ոգրերգութեան մէջ։

2-

Տաղերի մէջ ևս Նարեկացին երբեմն հետևակ ու վերացա-
կան է. նոյն իսկ չորս հինգ ընտիր տաղերի մէջ անգամ երբեմն
շատ մութն է իբր ինքնասնար բառերով կամ ժամանակի ճաշակի

*) Վասիլ կայսրը 449 թ. Հայաստան գալուց յետոյ՝ վերադառնում է
Կ. Պոլիս և յաւորդ տարին նորից գալիս։ Այս երկրորդ գալուստեանն է տկար-
կում Նարեկացին գրելով՝ ամբարթափ ի նոյն վերադառնալու։

*) Քառասնից տաղը նոյնպէս ունի «Գրիգորի է երգ» գլխաբանը.

համեմատ խրթնաբանութեամբ, արուեստական կնճռոտ ու խոր-
հըրդաւոր արտայայտութիւններով: Շատ բառեր և նոյն իսկ
խօսքեր նարնկացու տաղերի մէջ դեռ բացատրուած չեն, ինչպէս
շարժաբաններ, նճճէմ թէ նճճէմ, ասիճաղ պատիճաղ կայիւ:
Պակաս չեն և մանկական բառախաղութիւնները, մեծ մասամբ
կրկնութեամբ, որոնք անշուշտ երիտասարդական անկիրթ ճա-
շակի արդիւնք են, ինչպէս՝ «էին աջոյ աջոյ ձեռին Աջոյն իւր
աջ ընդ աջմէ հօր, Հօր ընդ աջմէ լուսոյն փառաց», — ուղում է
ասել՝ «էին աջոյ ձեռն է ընդ աջմէ հօր լուսոյն փառաց»: Այս-
պիսի բառերով ու կրկնութիւններով մթնանում ու թուլանում
են նոյն իսկ նրա՝ Մննդեան և միւս մի քանի տաղերը, որոնք
սակայն և այնպէս սիրուն բանաստեղծութիւններ են. որովհե-
տեւ ինչքան էլ մութը լինին, իրենց ամբողջութեամբ հասկանալի
են Յեռւմ, և մենք կարողանում ենք վայելել նրանց գեղեցկու-
թիւնը:

Առաջին անգամ մենք այստեղ գտնում ենք մեր զբաղանու-
թեան մէջ մի բանաստեղծական տեսակ, որի մէջ հեղինակն
իւր սիրոյ, զարնան և կանացի գեղեցկութեան երգն է երգում,
միայն թէ այդ սէրը չունի ոչինչ նիւթական, ֆիզիքական. դա երկ-
նային սէրն է, ուղղուած առ Աստուածածինն և մանուկ Յիսուսը:
Բայց և այնպէս այս հոգեւոր բանաստեղծութիւնն իր ձեռով ար-
դէն տարբերւում է շարականների տեսակից: Ա. Գրքի նմանու-
ղութիւնն և մեկնաբանական ու դաւանաբանական ազդեցութիւնն
արդէն յետ են մղուած: Բանաստեղծութիւնն այլ ես ստան ու ան-
կենդան մի յղացում չէ սովորական ձևերով, այլ դարձել է ան-
հատական ներշնչում: Օրններգութիւնը դարձեալ յորինւում է
Բրիտտոսի կամ սրբերի ու եկեղեցու փառաբանութեան համար,
քայքայ չունի այլևս դիտատիկական նպատակ: Այս պատճառով,
հակառակ շարականների բանաստեղծութեան, տաղասացը ձեռ-
տում է իդէալական պատկերներ ասած լերել, չբաւականանալով
Ա. Գրքի յարաւորութեամբ և կարծիքներ միայն արտայայտելով:
Վերացական բանաձևեր և դաւանաբանութեան ակնարկող բառեր
այլ ես չկան նրա մի քանի տաղերի մէջ, այլ դրա փոխանակ խօ-
սում է ինքը ընտելութիւնը, որից կենդանի զգացած պատկերներ է
առնում բանաստեղծը:

Մննդեան տաղի մէջ բանաստեղծի երեւոյթութիւնը խա-
ղում է, հակառակ ճշմարտական մոայլ ոգուն, ընտելեան մեղծ
գեղեցկութիւնների մէջ. առաւօտեան արևածագից թուում է
թուփ ու անրևին, որոնց վրայ իջնում է առաւօտեան ցօղիկը,
որ երբ արևը իր ծայրը ցոյց է տալիս, վառ ի վառեալ փայլում

է. կամ նա դիտում է ցողագին ամպը և օդի մէջ շաղուած անձ-
րնի կաթիլները, և ամպից անցնում է լուսաւոր լրժան լուսինն,
որի ետեից բարկ աստղերով ճեմում է գիշերավար արուսեակը:
Դա զարնան գեղեցիկ հարսանիքն է, որ ներդաշնակութեամբ
երկնազարդուած՝ գեղգեղում է իր երգը: Բայց դա այլաբանօրէն
միաժամանակ և հոգեւոր զարնան, նոր հոգեւոր կեանքի պատ-
կերն է, որ բացւում է Վերոյ, այսինքն Քրիստոսի ծնունդով
իբրև ւիսապայ լուսոյ՝ ժաղումն յարփոխն, որ մարդկային ազ-
գի սիրոյ համար գալիս, ծնւում է ինչպէս երկնքից իջնող մի
ցողաբեր ամպ: կամ ինչպէս մի զարնան ծաղիկ Ս. Կոյսի ծոցից-

Ջսէր իւր ի մեզ բաղցրիկ ցողեալ...

Ի սիրոյ սէր ծանուցեալ,

Սիրաբողբոյ տարփմամբ լցեալ,

Սիրով ընդ սէր միաբանեալ,

Գարնան այս ընդհանուր երգին խառնում է բանաստեղծը
և իր երգն.

Ե՛րգ զարմանալի, ե՛րգ շարժարժենի:

Տեղի եղեր բարեկերտին.

Խորհմբդ, խորհմբդ,

Համերամ զմբդ, երամից զմբդ.

Այսպէս բացականչում է նա՝ դիմելով Ս. Կոյսին, բարե-
կերտի մօրը, որ ներկայանում է նրան մի գաղափարական կնոջ
պատկերով, այնպէս նկարագրուած, ինչպէս մի աշխարհական
երգիչ իր կանացի գեղեցկութեան իգեալը կը նկարագրէր: Նա ամ-
բողջապէս մի պարզ է, նոճի ու նշտարներ հասակով. այռնիցն
նրբնից ի մի կից կամար՝ կարծես Վերջօրէի ժամն է ծագում.

Այլքն ծով ի ծով ծիծաղախիտ

Մաւաւանայր յառաւօտուն,

Երկու փայլակնաձև արեգակուն նման.

Շողն ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս:

Նրա նռնենի այտերը, կամարակապ ձեռները և ամբողջ
արտաքինը պատկերացւում են կենդանի և ուժեղ.

Բերանն երկթերթի, վարդն ի շրթանցն կաթէր.

Լեզուն շարժողին քաղցր երգանայր տաւիզն...

Վարսիցն երամից զարդ ոլորս են տուեալ,

Եռահիւսակն բոլորեալ այտիւք.

Մոցըն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ.

Մզիքըն ծիրանի մանուշակի հոյլք:

Խնկեալ ի կնդրկէ բուրժառ՝

Հրով աստուածայնով լցեալ.

Զայն քաղցրանաւոց որ ի նմանէ հնչէր:

Զի մոռացուած նոյն իսկ գեղեցիկ կապոյտ, ձիւրանի բնէն-
ղեայ պատմուեալն ոսկեշող, արծաթափայլ ոսկեատուն զօտին,
զարդարուած թանկագին քարերով, և նոյն իսկ քայլուածքը.

Դօսին արծաթափայլ, ոսկեատուն,

Կամարակապ, յականց շափուղայ,

Մանրամասին յօրինուածով պննեալ:

Անձինն ի շարժել մարդարտափայլ գեղով,

Ուրիշն ի գնալ՝ շողն ի կաթել առնոյր:

Դա մի գեղեցիկ պատկեր է, մի սքանչելի տեսիլ, որ

Հանդարտիկ խաղայր, թիկնէթեկին ճեմէր,
այսինքն կոտորտուելով, ուսերը շարժելով հանդարտ ճեմում էր.

Որոյ սիւնն ի սրտին նուախայօրէն

Կարկաջայր սաթերերունի սէր:

Մարդ ակամայ յիշում է Պէշիկթաշլեասի «Ճեմը մ լիսան
հալային», որի մէջ քանաստեղծը հրապուրում է գեղեցկութիւն-
ներովը բնութեան, որի ամենամեծ զարդն է երգող կոյսը: Բայց
չմոռանանք, որ նարեկացու բնութիւնը, զարուհը, մի այլաբա-
նութիւն, մի սիմբոլ է միայն Քրիստոսի ծննդեան համար, իսկ
նկարագրած գեղեցիկ կինը՝ Ս. Կոյսն է, նորածին Փրկչի մայրը.
ուստի բանաստեղծը վերջացնում է իր տաղն այսպէս.

Այն Թագաւորին, այն նորածին Փրկչին,

Զքեղ պսակողին փառք յաւիտեանս:

Դա իսկապէս ջերմ սրտից բխած մի օրհներգութիւն է
միայն, ուղղուած առ Ս. Կոյսը, որ ոչինչ այլաբանական չունի
իւր մէջ, իբր սիրոյ առարկան ի դէմս Սրբուհու երգուած. Բայց
այդ օրհներգութիւնն ամբողջապէս թարմութիւն է, այնպէս
զգացուած է և մարդկօրէն նկարուած ամեն ինչ. որ անպայման
իրական կեանքի մէջ տեսածից ու զգացածից է առնուած: Միւս
կողմից սակայն այն սէրը, որ գովում է քանաստեղծը, մի աննիւ-
թական սէր է. որովհետեւ երգուած կոյսն ինքն աննիւթ է.

Սերովբէանման, քերովբէաթոռ.

Հուպ երբակին լոյս գերազանց,

Լուսոյն արփի վեհինանեմ:

Նա, ինչպէս Աստուածածնի ներբողի մէջ (Եր. 414 հտ.) զրում է,

Ի մարդկային զարմէ հրեշտակ երկնային,

Յեղծականաց սեռիցս անմահ սերովբէ:

Ի հրդային նիւթոյ ոսկի Սոփերոյ,

Ի ծովային բերմանց շնորհայտս մարգարիտ,
 Ի Յասսահան բուսոյ քաղցրապտուղ ծաղիկ...
 Յօղոյն հանդարտիկ ամպ անձրևածիր,
 Արևուն ծագման ակն արփափայլ,
 Մերկացելոյ այգոյն աստղ առաւօտին,
 Գիշերային մթոյն խօսնակ բերկրանաց...
 Վեհին պատկեր կերպիւ կշռորդեալ
 Թեթև պարզութիւն հիւթիւ բաղկացեալ...
 Նա մի անհասանելի աստուածային պաշտելի էակ է, երկըն-
 քի իսկուհին, ռմեծ, երջանիկ, անարատ դշխոյ, մի լուսնդէն
 պատկեր, որի բարեխօսութեանն է դիմում յամախ բանաստեղծը
 խոնարհ. գետնաքարէ աղօթքներով, որոնց մէջ զգայական սիրոյ
 հետք անգամ չի նշմարուի.

Այլ բնկեալ սրտիւ, մատանց տատանմամբ, յոյս առեալ դարձի,
 Զդէմս ի յերկիր եղեալ պաղատիմ մօրդ Յիսուսի,
 Բարեխօսեմ, մաղթեմ քաւութիւն ինձ մեղաւորի,
 Գնա զօրաւոր փրկանակ կենաց, Իսկուհի երկնի,
 Քեզ օրհնութիւնք ձայնից և բուրմունք խնկոց ի յերկրի
 Եւ անուշից իւզոց մատուցումըն յամենայնի,

(Ողբ. Բան. ԻԶ. եր. 62)

Մի ուրիշ տեղ գրում է.

Աղաչեմ զքեզ, սուրբ Աստուածածին,
 Հրեշտակ ի մարդկանէ, մարմնատեսիլ քերովբէ,
 Երկնաւոր արքայուհի,
 Անխառն իբրև զօղ, մաքուր որպէս լոյս,
 Անշաղախ ըստ նմանութեան
 Պատկերի արուսեկին բարձրութեան,
 Գերազանց քան զբնակութիւն
 Անկոխելին սրբութեանց...

Այսպէս հենց սկզբից մեր բանաստեղծութեան մէջ, երբ-
 պացիններից շատ առաջ, կնոջ պատկերը դրոււմ է մի միստիկա-
 կան խորհրդաւորութեան մէջ, որին մօտենում է բանաստեղծը
 մի խորին աննաժողովեամբ ու հոգևոր հիացումով. Բանաստեղծն
 արդարև երկբաւոր սիրոյ շքեղ պատկերներով է նկարագրում,—և
 և այլապէս էլ չէր կարող,—բայց նա այդ բոլորը ծառայեցնում է
 միայն իր հոգևոր հիացմունքի առարկան զգալի դարձնելու հա-
 մար, և իր քան նուրբ, ազնիւ ու մաքուր կերպով, միաժամանակ և
 մառ արտայայտութիւններով է նա այդ անում և պայծառ գծագրում
 մի կնոջ իդէալական պատկեր, որ այնուհետև իշխում է մեր հին
 բանաստեղծութեան, մեր սիրոյ երգի մէջ:

Ս. Կոյսի նկարագրից յետոյ անցնում է «մանկան» կամ փեսայի գոյնեստին նամանութեամբ Երզնայ Երզնի, (որ իսկապէս մի սիրոյ երգ է, այլաբանութեամբ մեկնաբանուած Քրիստոսի և եկեղեցու վրայ): Եւ վերջապէս Յայտնութեան տաղի մէջ, որ Մանգեան տաղի շարունակութիւնն է, աւետիս է տալիս տիեզերքին Քրիստոսի ծննդեան և մկրտութեան համար: Բնութեան սիրահար քանաստեղծը չի մոռանում, իսկ ժողովրդական ձևով, աւետիս տալու նաև ծառերին ու ծաղիկներին, ջրերին ու լեռներին, և տեսէք, թէ ինչպէս մի քանի քառերով մանրամասն նկարել զիտէ բոյսերի գոյներն ու ջրերի շարժումը:

Աւետիս ծառոց ծաղկանց,

Բողոջախիտ խիտասաղարթ,

Գոյն գեղեցիկ, պտղինաւէտ,

Ակնահաճոյ, համ քաղցրունակ,

Հաս բուրաղուարթ; փունջ խուններամ,

Մայրից վարդից փթթինաղարդ,

Թերթ տարածեալ ոսկէճամանչ,

Տերեախիտ կանաչացեալ:—

Աւետիս տայր Յովհաննէս

Յորդ աղբերաց, հոյլ վտակաց,

Ջուր մանուածոյ ծիծաղ ծաւալ,

Կարկաշաճոս ուխինառօս,

Մայթինասէր մանուածաւալ

Շրջանապտոյտ մանր աւաղին.

Հոլով խորոց մէտ մէտ գուգին,

Վայր, վեր, անէջ, վեր, վայր ի վեր՝

Փութան ի ջուրսն Յորդանանու:

Տաղերի մէջ արդէն երևում է բանաստեղծի երեսակայութեան մի էական կողմը, որ խիստ զարգացած է Ողբերգութեան մէջ. նա նկարչի նման տեսնում է ամբողջական պատկերներ: Այսպէս Յարութեան տաղերից մէկի մէջ մենք տեսնում ենք Յիսուսին քառաթևի վրայ՝ ինչպէս մի առիւծ ահեղ ձայնով գոչելիս զէպի Սանդարամետը, որ զոգալով սարսում է. առիւծն Յիսուս քանդում է Սանդարամետի ամբողջները և այնտեղ գերուածներին աւար առնելով՝ ազատում է տանջանքներից և անանց պատկերելով զարդարում է նրանց:

Աւելի գեղեցիկ է նրա Յարութեան տաղը սայլի պատկերով, որ մի այլաբանութիւն է և մեկնութիւնը հենց ինքը՝ հեղինակը յօրինել է: Առանց այդ մեկնութեան՝ այդ երգը լոկ նկարագիր է մի սայլի, միայն այլաբանութեան պատճառով, զուցէ և աղա-

ւաղուած լինելով, յօրինուածքի զաղափարը մթնած է։ Այստեղ տեսնուած ենք Մատիսից (Սինայից) իջնող մի արքայական սայլ, զարդարուած բնիկներով և ծիրանիներով։ Վրան դրուած է ոսկի գահայք, որի վրայ նստած է արքայորդին։ Նրա աջ ու ձախ կողմերից կանգնած են սերովքէք ու քերովքէք, առջևում զեղեցիկ մանուկներ, զրկերին տէրունական խաչը, ձեռքերին սաղմոսարան ու քնար, և երգում ու ասում են՝ «Փառք Գրիստոսի ամենազօրյարութեան»։ Բայց

Աձեալ են ածեալ,

Ջալլիկն ածեալ են կացուցեալ.

Եւ ահա չարժէք սայլիկն ան,

Եւ ահա չխաղայր անին ան։

Սայլն ունի ամեն պատրաստութիւն ու զարդարանք։ ունի հարիւր բարդ խորձան, մի բարդ կորնկան, մէկն էլ մանուշակ խրձաղիղեալ։ Նրա սամիքն արծաթի են, լուծը ոսկի, սամոտիքը ապրշմի, ւփովներ շարած շարանման հոյլ մարգարիտ, նրա քշող ճորտը ճոճ է և ճապուկ, ուռածիջակ, հաստաբազուկ, լայնաթիկունք, խարտիշագեղ, որ անեղազոյ ձայն է տալիս եզնամոլին, կանչում է աթոռակին,—բայց և այնպէս սայլը Մատիսի աջ կողմում անշարժ կանգնած է մնում։ Սակայն երբ լծում են եզնիւրը սաթ ու սպիտակ, ծաղկախայտուցք, արագաքայլը, ընթացականք, եղջիւրն ամեն խաչանման, և մազն ամեն հոյլ մարգարիտ,—այդ ժամանակ ահա տեղից շարժուած է սայլը, բի յառեղէն առեալ շարժումն կուրծն սայլին։ Ծորտը ձայն է տալիս եզնամոլին, և սայլը գլզլալով ու ճոնչալով գնում, մտնում է Երուսաղէմ, և Սիօնի որդիքը երգելով ասում են՝ «Փառք Գրիստոսի ամենազօրյարութեան»։

Ի՞նչ է այս, եթէ ոչ թագաւորական հանդիսաւոր գնացքը սայլով։ Անպայման այսպիսի գնացքներ Արծրունեաց թագաւորների՝ տեսել է Նարեկացին և հենց այդ զրի առել։ Բայց այս տաղի արժէքն այնքան իր նկարագրի մանրամասնութեան, իրականութեան ճշգրիտ պատկերի մէջ չէ, որքան արտայայտութեան ձևի մէջ։ Բայաստեղծը լեզուին իշխող արուեստաւոր է։ Նրա այս տաղը մեր խառն ոտանաւորներին մի շատ ընտիր օրինակ է, որի մէջ ոտանաւորն իր բաղմազան ձևերով ըստ ամենայնի յարմարում է բովանդակութեանը՝ մնալով միանգամայն շատ օրթմիկ *):

*) Թէ Գր. Նարեկացու երգերից այս կամ այն առնուած է մեր շարակնացի մէջ թէ չէ, այդ մինչև այժմ յայտնի չէ։ Այս Յարութեան տաղի վերջում կան Այսօր արձակեցաք բռտերը, որոնք չեն կապուած աւերաջ տաղի հետ և մնում են իրենց համար անկախ։ Այս երկու բառը Յարութեան «Տէք

Նոյնպիսի հմուտ արուեստով է յօրինուած և Նրա Վարդա-
վառի տաղը, որ բացի վերնագրից և վերջին տողերից՝ զբեթէ
ուրինչ կրօնական շունի իր մէջ. զա Յիսուսի պայծառակերպու-
թեան հետ կապուած է միայն նրանով, որ ամբողջապէս լուսով
ու զոյնով է լցուած: Տաղասացն՝ ազդուած «Վարդավառ» քառի
ժողովրդական ստուգաբանութիւնից՝ նկարագրի է միայն անուժ
ամառուայ լեռնային կանաչավառ բնութեան, վարդի ու շուշանի,
ծառ ու ծաղիկների, շաղ ու շողի, լեռնային քաղցր օդի ու հովի
և աստեղազարդ երկնի: Ամբողջը բուրում է մի անուշահոտ
թարմութիւն: Բանաստեղծն այստեղ ոչ միայն արդէն
բնութիւնը գիտել գիտէ, այլ և տպաւորւելով բնութիւ-
նից՝ կարողանում է տալ մեզ այդ մի հրապուրիչ արուեստով,
ուրիշ մի կրթական ուղեւորով ու բազմաշնչների հանգիստու-
թեամբ շոյւղով մեր ականջը, միաժամանակ և խաղուն դարձնե-
լով ոտասնաւորը: Բայց որ գլխաւորն է՝ նա մի քանի կարճ խօսքե-
րով քննութեան ընդարձակ պատկեր է հանում, մեծ վարպետու-
թեամբ թելադրելով ընթերցողին մտքով լրացնել այդ պատկերը:

Ե.

Այն ժամանակ երբ ծաղկում էր Հարաւարապետութիւնը իր
համալսարանութեամբ և ներքին ուժեղ արտայայտութեամբ, բանաս-
տեղծութիւնը չէր կարող թաւ անարուեստ վիճակի մէջ, առանց
որի է անսութեան: Եւ իսկապէս, Նարեկացու երկերի մէջ ոչ
յերկնից չարանանդից մէկի երբորդ տան տալին բռնեմ են (Տես չա-
բական Հոգեւոր երգը, էջմիածին 1861 եր. 378): Եւ չարանի տալին և երկ-
րորդ տներն են.

Փառք Քրիստոսի ամենազօր յարութեանն:

Քրիստոսի ամենազօր յարութեանն

Նրկըզպան սերովբէքն

Եւ վեցթեան քերովբէքն,

Հոգեւորական հնչմամբ երգեն տալով:

Փառք Քրիստոսի ամենազօր յարութեանն:

Այս չարանի կրկնակը, որ նայն է Յարութեան տաղի կրկնակի հետ
(Փառք Քրիստոսի .), չարանի բովանդակութիւնն ու փառաբանական բը-
նաստութիւնը, քերովբէների և սերովբէների երեան զալը, «Մյուսը աշնակե-
ցաք» բռնեմը, և վերջապէս նայն իսկ ազատ ստանաւորը երկուսի մէջ էլ, —
այս ամենը պարզ ցոյց են տալիս, որ այդ Յարութեան չարանան եղել է
Նարեկացու Յարութեան տաղի չարանակութիւնն իբրեւ Սիօնի որդիներն
երգ, որ պէտք է լինէր տաղի վերջում և չկայ: Այդ չարանան անպայման
եղել է Նարեկացու այս տաղի վերջին մասը, ըսյց երեկ ամբողջ չի երգուած
եղել: (Քանի որ տաղ չառ կերկարէր), այլ միայն վերջին տունը. և որով-
հետեւ չարանի չառ ծանօթ է եղել, զորով բուռնացել է տաղի վերջում
զնել միայն սկզբի երկու բռնեմը՝ «Մյուսը աշնակեցաք»:

միայն որոշ, երբեմն շատ նուրբ արուեստ ենք գտնում, այլ տեսնում ենք նաև նրա հայեացքը բանաստեղծութեան թէ բովանդակութեան և թէ ձևի մասին:

Ամենից առաջ նա բնութեանն արժէք է տալիս: Նա բնութիւնն զգում է, թէպէտ և բուսական պարզ ու միամիտ ձևով, իբրև մի կենդանի միութիւն, որ ունի իր վսեմ խորհրդաւորութիւնը: Ամեն կենդանութեան սկիզբն է արգիւն իր վեհ վարսերով. նա է որ գունավառում է ամեն ինչ. նա քաշում է տալը, որից ցօղն է շաղում և մարգարտազարդում թուփ ու կանաչ: Բայց արեգակն իր համաառաւած ծովի մէջ, նրանից վառ առնող ու փռուող վարդը, գոյնզգոյն ծաղիկները, շողշողուն ու խուռն տերեւների մէջ սնուող պտուղը, հովտում շաղով լցւած շուշանը, որ արեգակի դէմ շողշողալով հովհաւառում է հիւսիսային հովից և հարաւային լեւան քաղցր օդից, և վերջապէս՝ գիշերային երկնակամարը լուսնի դէմ գունդ գունդ թուրած աստղերով,—այս ամենը կազմում են ոչ միայն մի մեծ ներդաշնակ ամբողջութիւն, այլ նոյն իսկ մի աստուածային երաժշտութիւն: Ի. Զորգարեանի «Մենաւոր ծառի» մէջ գտնում ենք հետևեալ տողերը. «Երգէ, ճգ ծառ, որ կը քնաս իբրև լարուած տրամադրելի քնար՝ բնութեան արձակ՝ հովերուն, արձակ բանաստեղծութեան առջև. երգէ անփութօրէն վշտահոծ կամ ցնծալից եղանակները. երգէ ինչպէս որ տուն կուտայ հիւսիսի քամին կամ մեղմաթև հովիկը. ինչ հոգ, բուսական է որ անկեղծ ըլլան թուր ձայներն ու անոնց հաղորդուած յուզումները՝ որ քու սաղարթներուդ, տերեւերուդ մէջէն կանցնին ու կը շնչեն: Այս միկնոյնը նարեկացին արտայայտել է շատ կարճ. «Տերևն՝ տաւիղ Տուողին, Զոր երգէր Դաւիթ հրաշալին: Հովից սօսուողը տերեւը, ուրեմն, հնչուն բնութիւնն առհասարակ, զա Աստուծու քնարն է, որ նուագում է նաև բանաստեղծը: Բանաստեղծն ինքն էլ, սակայն, Աստուծու քնարն է. «Սուրբ Երրորդութեանդ արժանասցուք լինել քնար միշտ հոգևոր հնչմանց» (Տաղ Համարձման եր. 478): Կը նշանակէ, մեր նաբեկացու հայեացքով, բանաստեղծն էլ նոյնն է անում, ինչ որ բնութիւնը: Նա երգելով բնութիւնը՝ նուագում է աստուածային քնարի վրայ: Արժամարնուած և անտես արուած, նոյն իսկ մեղսական համարուած բնութիւնն ուրեմն ստանում է իր իրաւունքը՝ նա կենդանանում է: Բնութիւն երգելն համարում է մի աստուածային փառաբանութեան գործ կատարել, որովհետև բնութիւնն ինքը փառաբանում է Աստուծուն, «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ: Այս անհրաժեշտ էր բանաստեղծութեան հա-

մար, քանի որ առանց բնութեան չկայ ոչ մի զօր՝ զ քնարերգութիւն:

Միւս կողմից՝ բնութիւն երգող այս բանաստեղծը գիտէ, որ աստուածային ներշնչութիւն ունի իր մէջ. նա գգում է, որ իր խօսքի շնորհքն Աստուծուց է, նրա մէջ աստուածային ձայնն է խօսում:

Նզդիցի հոգի քո խառնեալ ի սա,

Շունչ զօրութեան Մեծիդ միասցի

Ի Գն ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս:

Այսպէս է գիմում նա Աստուծուն՝ Ողբերգութեան սկիզբներում (Բան Գ.եր. 10): Մի ուրիշ տեղ (Բան ՀԳ.եր. 191) ասում է. «Ի Քէն աղգեցաւ գրել ինձ գոտիքն»:

Այսպիսի գիտակցութիւնից բանաստեղծութիւնը դառնում է արդէն կենդանի շունչ, ինքնարուխ արտայայտութիւն անհատական զգացմունքի ու ապաւորութեան: Քերթուածը յօրինում է ոչ թէ մեքենայաբար, կաշկանդուած սովորական ու աւանդական ձևերով և նիւթով. նա այլ ևս նմանողական չէ, ինչպէս էր սովորաբար շարականների մէջ, — այլ ստեղծում է մի նոր բան և բոլորի թիւադրութեան համեմատ: Ինչպէս և ինչ որ Աստուծոյ կամ նրա տալիզ բնութիւնը կը խօսի բանաստեղծի սրտում, այնպէս էլ նա կերպի և կերպի անկեղծ, իր ամբողջ էութեամբ, լինի նրա երգը Աստուծու փառաբանութիւն, ինչպէս նրա ասողներն են, թէ արտի խորքերից բխած մաղթանք ու աղերս, մի անարիւն զոհաբերութիւն Աստուծուն, միանգամայն և օրհնեղութիւն, ինչպէս է նրա Ողբերգութիւնը:

Ձայն հառաչանաց հեծութեան արտի ողբոց աղաղակի

Քեզ վերընծայեմ, Տեսնողդ գաղտնեաց.

Եւ մատուցեալ եղեալ ի հուր թախծութեան անձին տոչորման

Զպստեղ ըղձից ճենճերոյ սասանեալ մտացս՝

Բուրվառաւ կամացս առաքել առ Քեզ...

Ելլէ ի խորոց աստի զգայութեանց խորհրդակիր սենեկին

Վաղվաղակի ժամանել առ Քեզ

Կամաւորական նուէր բանական գոհիս,

Ողջակիզեալ զօրութեամբ ճարպոյ

Որ յիմն է պարարտութիւն:

Այսպիսի անձնական քնարերգութիւնը միայն, — որ մի կողմից՝ խօսում է սեպհական ներքին ապրումներից, միւս կողմից՝ չի խորշում բնութիւնից, — պիտի դառնար իսկական բանաստեղծութիւն: Բայց այդ դեռ քիչ է. դրա համար հարկաւոր էր նաև երկու ուրիշ բան՝ հարուստ նիւթ կամ բովանդակութիւն և ար-

ուեստաւորութիւնս Ինչքան էլ բանաստեղծական երկի մէջ հեղինակի իրեն սեպական ապրումները, իր անձնական զգացումներն ու խորհուրդները պիտի լինին կերպացած, բայց և այնպէս դրանք պիտի ունենան ընդհանուր արժէքաւոր բնաւորութիւն։ Զուտ անձնական ցնարերգութիւն անելով հանդերձ՝ բանաստեղծը, այսպէս ասած, իր սրտի մէջ պիտի զգայ իր ժամանակի եթէ ոչ բոլոր մարդկանց, զոնէ իր հասարակութեան հոգին և ոչ միայն իր սրտի բաբախումները դնի իր երկի մէջ, այլ և ուրիշներինը։ Եւ մեր Գրիգոր Նարեկացին գիտակցում է արուեստի այս տեսութիւնը. նա իր Ողբերգութեան համար պարզապէս յայտնում է, թէ ամենայն դասի և հասակի, իր ժամանակի բոլոր քրիստոնեաների հոգին է ներկայացնում՝ «նշաւակեալ յիւրում պատկերին»։

Եւ քանզի առ ամենայն հասակ
Տնկեցեալ յերկրի ազգ բանականաց՝
Այս պատուէր՝ նկարագրական
Նորոգ մասննի ողբոց նուագի,
Որ դամենեցունց ունի զկրից պատահմանց
Նշաւակեալ յիւրում պատկերին,
Իբր կցորդ մեծգիտական կարեաց համայնից,
Առ բոլոր գումարըս բազմադուով
Տիեզերակոյտ քրիստոնէից...

(Բան. Գ. եր. 7 հա.)

Ուրիշների զգացումներն ու ապրումներն իր անձի վրայ արտայայտելով սակայն, նա առարկայական բանաստեղծութիւն չի յօրինում, մի լոկ քերթողական ձևով չի բանեցնում իր ետը. այլ միաժամանակ իսկական անձնական ցնարերգութիւն է աւնում, որովհետև խորը կերպով զգում է, որ այն ամենը, ինչ որ ուրիշներն ունին և ինքն արտայայտում է, նաև իրենն է, իր սեպականն է (Ողբերգ. Բան. ՀԲ. եր. 188)։

Ոչ ոք մեղաւոր իբրև գիտ,

Ոչ ոք անօրէն, ոչ ոք մեքարիշտ,

Ոչ ոք անիրաւ, ոչ ոք չարագործ,

Ոչ ոք վրիպեալ, ոչ ոք սխալեալ,

Ոչ ոք մոլեգնեալ, ոչ ոք խորդախեալ,

Ոչ ոք շաղախեալ, ոչ ոք ամաչեցեալ, ոչ ոք դատապարտեալ.

Ե՛ս միայն և այլ ոչ ոք,

Ե՛ս ամենայն և յիս ամենեցուն։

Թէ անձնականութիւնը որքան մեծ տեղ է բռնում, այդ երևում է հետևեալից։ Բանաստեղծն իր Ողբերգութիւնը գրել է իբրև աղօթից մատեն այն նպատակով, որ մարդիկ այդ գրքի

վրայ աղօթելով փրկութիւն ստանան. բայց այս գէպում էլ նա այնքան ուրիշներէ համար չի հոգում, որքան իր համար: Շատ անգամ նա կրկնում է, թէ քանի որ այս աղօթքներն իր հոգուց են բխել, ուստի երբ ուրիշներն իր այդ գրքի վրայ աղօթեն, այդ միևնոյն է թէ ինքն է աղօթում:

Եղիցի բղխումն արտասուաց սովաւ վարժելոցն,
Եւ պարզենալ տացի ի ձեռն սորին ապաշաւ ըղձից.—

Շնորհացի, Տէր, և ինձ ընդ նոսին

Առ ի քէն զղլումն կամաց...

Նուիրենցի վասն իմ այսու մատենիւ պաղատանք նոցին,

Եւ բանիւս այսու հեծութիւնք նոցին ընդ իմ խնկեացին...

Եթէ ելլեն ինձ բարեպարիշաք ընծայիլ սովաւ,

Ընկալ կենդանեօքն վասն քո, գթած, և զիս բնդ նոսին:

Ողբերգ. Բան. Գ. եր. 8

Եւ վերջապէս, բանաստեղծութիւնը, ասացինք, պէտք է յօ-
րինուած լինի որոշ արուեստով, այսինքն ձևով գեղեցիկ պիտի
լինի, իսկ դրա համար հիմնական պայման է, որ գեղարուեստ-
կան երկը բաղմազանութեան մէջ միութիւն պիտի ունենայ. որ
է մի հիմնական գաղափար, մի գործողութիւն և, եթէ քնարեր-
գութիւն է, նաև մի ընդհանուր եղանակ, տոն: Մեր Ողբերգու-
թեան հեղինակը վերջաբանում այսպէս է ընդորոշում իր երկը.
«Ստացեալ հիմնեցի կառուցի, կարգեցի, կռտեցի, արձանացուցի,
դիզի, բարդեցի, ցուցի հաստատելով ի հրաշակներտութիւն միա-
գոյ իրի զբազմաստեղնեան ղրուագս գրութեան այսմ սփերի
արգասաւորիս: Ուրեմն իր երկը նա ըմբռնում է իրեն բաղմանիւզ
դրուագներով հրաշակներտութիւն միագոյ իրի, մի բանի. այսինքն
ստեղծագործութեան նիւթն է մի ընդհանուր մեայուն գաղափար.
մի խնդիր. դա կազմում է երկի էութիւնը, անցնելով ամբողջ երկի
միջով: Դա միութիւնն է, մնացածները այդ մի նիւթի բազմա-
զան պարզացումներն են միայն, որ էական գաղափարի շուրջը
ճիւղաւորում են զանազան ձևերով: Բացի այդ՝ «Փոխեալ գեղա-
նակ բանիս, այլ ոչ գեղկութիւն աղետիս», ասում է նա (Բան ԻԵ.,
եր. 58). մի ուրիշ տեղ, այսինքն բանաստեղծութեան ոչ միայն
նիւթը մի միութիւն ունի, այլ և եղանակը, տոնը, նոյն է մեռւ
նոյն երկի համար:

Անս մի ամբողջ տեսութիւն բանաստեղծական արուեստի
մասին, որի տարերքը զտնում ենք նրա երկի մէջ, և որը 19-րդ
դարի երկրորդ կէսին աւելի պարզել ու զարգացրել են Ֆրանս-
ացի քննադատները:

Բանաստեղծութեան այսպիսի խոր ըմբռնումի արգասիք է

այն, որ Ողբերգութեան մատենանի մէջ, որ իսկապէս մեր առաջին մեծ բանաստեղծական երկն է, արուեստաւոր կերպով մնացուն ձև են ստացել ոչ միայն անհատական, այլ և ընդհանուր մարդկային յաւիտենական դադափարներ ու զգացումներ, ազբույթներ ու անբխնձորներ, և այս՝ 11-րդ դարու սկզբում, այն ժամանակ, երբ եւրոպական նոր ազգերը ոչինչ կամ գրեթէ ոչինչ չունէին: Նա մեր հոգեւոր բանաստեղծութիւնն այդ երկով մի անզամից բարձրացրել է իր հանճարով, ամփոփելով այն ամենը, ինչ որ նախորդ դարերում մեր հոգեւոր քնարերգութեան մէջ կար արտայայտուած, մի այնպիսի ինքնայատուկ ձևով, որին նմանել չեն կարողացել:

2.

Ի՞նչ է նպատակն և էութիւնը նրա Ողբերգութեան մատենանի, որ է թի խնդրոյ հայցմանց հարց միանձանց և բազմաց անապատականաց ասացեալս:—Ինքը հեղինակը անփոփոխ կըրկնուող վերնադիրներով, որ զնում է ամեն մի բբանի՝ համար, շատ լաւ բացատրում է այդ. «վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ»: Սրտի խորքում կուտակուած է մեղքը. Աստուած մի անաչառ դատաւոր է, բայց և ներող ու զթած հայր. Հսկողի խօսքն Աստուծու հետ հեծութիւն ու զղում է աղօթախառն. իսկ նպատակն է փրկութիւնը, Այս է կազմում Ողբերգութեան էութիւնը, միութիւնը: Եւ այս՝ ժամանակի քրիստոնէական միտախցիզմն է, որ ցայտուն արտայայտութիւն է դառել նարեկացու մէջ:

Նրա երկի մանրամասնութիւնների մէջ մենք տեսնում ենք ընդհանրապէս ինն քրիստոնեայի և մասնաւորապէս մենակեացի եղբերդական վիճակն իր ամբողջ պատկերով և աշխարհայեցողութեամբ: Տիեզերքը չունի նրա համար այն մեծութիւնը, ինչ որ հիմա մեզ համար: Դա կազմում էր մի երեք յարկանի մեծ շէնք՝ եօթնտակ երկինք, երկիր և եօթնտակ դժոխք կամ սանդամեաք անդնդոց,— Աստուծու, հրեշտակների ու արդարների բնակարան, մարդկանց ժամանակաւոր կացարանը և սատանաների տանջարանը: Այստեղ, ինչպէս մի ընդարձակ բեմի վրայ, ինչպէս զեղեցիկ արտայայտում է մի ֆրանսացի բանասէր, աշխարհի սկզբից ի վեր կատարոււմ էր մի մեծ գործողութիւն, որի վախճանն առաջուց յայտնի էր, որ լինելու էր վերջին դատաստանը:

Մարզն Աստուծու արարածների մէջ ամենից սիրելին է, նոյնիսկ սատանայից շատ աւելի բարձր: Ամեն բան ամենակարող

Աստուածը ստեղծել է միայն մարդու համար, նոյն իսկ հրեշտակներն ու սատանաները, և նրա հոգացողութեան միակ առարկան մարդն է: Աստուած սակայն անմիջապէս չի խառնուում մարդկանց գործերին. որովհետեւ ստեղծելով մարդուն՝ տուել է նրան ինքնիշխանութիւն, ազատ կամք, կամ գործել բարին և փրկուել, գնալ երանութեան դրախտը, վերին Երուսաղէմ, կամ թէ չար գործել և գնալ դժոխքը, յաւիտենական տանջանքի տեղը: Թէպէտ և մարդն իր գործերով անարժան է, բայց Աստուած բարերար է, միշտ խնամում է նրան, նա յայտնի է իր առ մարդն ունեցած բարերարութիւններով, կամենում է որ մարդը փրկուի, և նոյն իսկ Աստուծու որդին մարդացել է զրա համար: Եւ մարդը կարող է փրկուել, որովհետեւ ոչ մի մեղք չկայ որ անկեղծ ապաշխարութեամբ չքաւուի:

Տիեզերքի, մասունքն ու այն աշխարհի առեղծուածն ուրեմն, որ նոր քնարերգութեան ամենավսեմ նիւթն է կազմում, որոշ էր հին քրիստոնեայի համար, և նա չլիտի այդ զաղտնիքի անյայտութեան առաջ իր ներքին յուզումներն ունենար, և թոււմ է թէ չլիտի զարգանար զօրեղ քնարերգութիւն: Սակայն այդպէս էր միայն սոսկական մարդու համար, որ հանգիստ ապրում էր, որովհետեւ ամեն բան հոգացուած էր նրա փրկութեան համար: Բաւական էր, որ նա մեռնելուց առաջ խոստովանուէր և հաղորդուէր: Իսկ խոռուն և զօրեղ ոգիները հենց այդ աշխարհայեցողութեան մէջ գտնում էին հոգեկան տանջանքների աղբիւր: Սոսկական մարդու մահը՝ նրանց համար անմահութիւն չէր, այլ մեռելութիւն, մի չար մահ, որովհետեւ նա չգրտէ, թէ ինչ է մահը: Դա մինչև անգամ անասունի մահ է:

Իբր զանգզայ պաճարս անտանոց
Մեռանիմք և ոչ զարհուրիմք,
Կորնչիմք և ոչ հիանամք,
Թաղեցեալ լինիմք և ոչ խոնարհիմք,
Տարագրիմք և ոչ տագնապիմք,
Եղծանիմք և ոչ զղջանամք:
Մաշիմք և ոչ մտառեմք,
Պակասիմք և ոչ պատրաստիմք,
Գնամք և ոչ զգուշանամք,
Գերիմք և ոչ ևս զգամք:

Բան. Մե. եր. 140

Մարդու վախճանը չլիտի լինի միայն արդարանալ, այլ և ձեռք բերել բարձրագոյն բարիքը, այն է՝ անբաժանելի միանալով Աստուածութեան հետ, որ ամենայն կատարելութեան լու-

սատիղն է, ստանալ մի աստուածային անդորրութիւն: Այս է
անա իսկական փրկութիւնը, որին ձգտում էին զօրեղ ոգիները և
որ խորը ցնցում է մեր բանաստեղծի մտքով չէր թիւնը, և նա
ուրիշ հազարաւորների հետ անձնատուր է լինում ճգնութեան և
միասփրիզմի:

Իսկ ես ոչ միայն կարդամ,
Այլ նախ հաւատամ մեծութեան Նորին.
Ոչ եթէ վասն պարզեաց Նորա՝
Մատուցեալ յողոք զեզերիմ,
Այլ իբր զկենդանութիւն իսկապէս
եւ զնշոյ տարեառութիւն հաւասարի,
Առանց որոյ ոչ է շարժողութիւն կամ ընթացութիւն.
Ջի ոչ այնքան յուսոյ հանգուցիւ,
Որքան սիրոյն կապանօք բերիմ:
Ոչ ի տուրան, այլ ի տուողն յաւէտ կարօտիմ.
Ոչ փառքն են ինձ անձկալի,
Այլ փառաւորեանն է համբուրելի.
Ոչ կենացն փափազանօք,
Այլ կենարարին յիշատական միշտ ճենճերիմ.
Ոչ վայելիցն տարփանօք հեծեմ,
Այլ հանգերձողին տենչանօք
Յերթկամանց սատի կականիմ.
Ոչ զհանգիստն խնդրեմ,
Այլ զհանգուցիւն զերեսս աղաչեմ.
Ոչ հարանարանին խնճոյիւք,
Այլ փեսային անձկութեամբ մաշիմ...
Աներկմիտ յուսով հաւատամ՝
Ի կարողին ձեռն ապաստանեալ՝
Ոչ քաւութեան միայն հասանել,
Այլ զնոյն ինքն տեսանել՝
Յողորմութիւն և ի վթութիւն
եւ յերկնիցն ժառանգութիւն,
Թէպէտ և յոյժ եմ տարագրելի:
Բան ԺԲ. եր. 27 հտ.

Զօրեղն ինքնութեամբ զիս Հօր ընծայեալ,
Անդէն առ նմին, նովիմք միշտ ի Քեզ՝
Ծնչոյս ողջունիւ կապեալ ընդ չորհրդ՝
Ի Քեզ միանալ անբաժանելի:

Բան ԻԴ. եր. 57

ի Քեզ, Տէր, անկայց

Միացեալ իսպառ անբաժանելի:

Բան ԶԵ. եր. 226

Նդիցի որորմութիւն Ստեղծողիդ ընդիս,

Նւ շունչ ոգւոյս ի՞մ ընդ Քեզ

Անբաժանօրէն կապու միացեալ ի մի:

Բան Ղ. եր. 235

Քրիստոնէական միաբնիկդմը թէ տեսականօրէն և թէ գործնապէս կատարեալ արտայայտութիւն է զտեղ մեր բանաստեղծի մէջ: Մարգուս անձնաւորութիւնը, միանալով Աստուծու հետ, բոլորովին չի կորցնում իր առանձնութիւնը և չի ոչնչանում՝ լուծուելով Աստուծութեան մէջ. այլ Նրա հետ և Նրան հաւասար ունենում է անճառելի լոյսի մէջ՝ անվախճան փառք վայելութեան, անզորութիւն կենաց հանգստեան, մարդն Աստուծու մէջ և Աստուած ինքը մարդու մէջ:

Նոր հաստատեցի գոյութիւն բնութեանըս

Մարմնեղէն յարկի անդամոցս,

Յորում հանգուցեալ անլքանելի՝

Բնակեցեալ բազմեալ ախորժ տենչանօք՝

Միութեամբ հոգւոյս ի՞մ ընդ Քեզ:

Բան ՀԸ. եր. 209

Այս փրկութիւնը լինում է միայն Աստուծու շնորհքով, որ Նա իբրեւ ձրի տուրք բաշխում է մարդկանց, բայց ոչ ամենքին. «Դարձիր, Տէր, դարձիր քաղցրութեամբ ի խնամս զթութեան ձրի և ամենառատ պարգևօք սիրոյ՝ միեթարել յաւէտ զտրտմեալքնս համաշախիղ տաղնապաւ տապոյ տոչորման անբժշկականի» (Բան ԽԸ. եր. 123): Բայց մարդն ինքն էլ պիտի աշխատի այդ շնորհքին արժանանալ. դրա համար Նա պիտի ունենայ ամենից առաջ հաւատ, յոյս և մանաւանդ սէր. առանց դրանց՝ ուժգնաբար զգլու՜մը, ինչպէս և մեղանչելը, միապէս կորստւան է մատնում, Հաւատով կարելի է ամենայն բան անել, և հաւատով է միայն որ ապաշխարողը կանգնած է զգու՜մ իրեն. յոյսը տանում է զէպի տուրքը, փառքը, կեանքը, վայելչութիւնն ու հանգիստը, մի խօսքով՝ արդարացումը. իսկ սէրն է միայն որ փրկութիւն է բերում, որովհետեւ սէրն առ Աստուած կարօտում է իրեն Աստուծուն տեսնելու և Նրա հետ միանալու: Մի անգամ որ միստիկն ունի փրկութեան համար անհրաժեշտ հաւատը, յոյսն ու սէրը, այնուհետեւ Թնում է Նրան գործադրել փրկութեան միակ

միջոցը. նա պէտք է ամբողջովին նուիրուի Աստուծուն, ուրանայ իր անձը՝ միայն Աստուծով և Աստուծու մէջ ապրելու համար: Նա պէտք է խորասուզուի իր հոգու մէջ, որ Աստուծու պատկերն է. շարունակ գիտի, քրքրի ու վերլուծի այն, որ միեկնայն է թէ շնորհալի աչքը յառած կեանքի գլխին, շարունակ Աստուծուն գիտի: Նա պէտք է շարունակ աշխատի ազատուել ու կտրուել զգալի աշխարհից, մարմնի կարիքներից ու կրքերից, մաքրուել արտաքին բաներից: Իսկ դրա համար էլ պէտք է միշտ թուլացնի, ճնշի մարմինը, ինքն իրեն նուաստացնի, մեղադրի, աղօթի և Աստուծու ողորմութիւնն ու զթութիւնը հայցի,*) մինչև որ վերջիվերջոյ կարողանայ միանալ Աստուծուն և կատարեալ անդորրութեամբ երջանկանալ զանախով աստուածաման:

Բայց հնարաւոր է արդեօք ուրանալ մարմինն ու աշխարհը, Այս անհնարութիւնն ահա կազմում է ներքին յուզումների և մի զօրեղ քնարերգութեան աղբիւր:

է.

Մարդը, լինելով հանդերձ Աստուծոյ ստեղծագործութեան կեդրոնը, իսկապէս մի թոյլ էակ է, կազմուած երկու հակառակ մասերից՝ մարմնից և հոգուց: Փրկութեան ձգտելով՝ նա շարունակ ներքին պայքարի մէջ է և չգիտէ, թէ որի կամքը կատարի, մարմնի թէ հոգու: Այս երկուութիւն է ահա, որ դառնում է նրա համար տանջանքի պատճառ: Պէտք էր մեղցնել մարմինն և ուրանալ աշխարհը և ամեն ինչ նիւթական, որովհետև հին քրիստոնէական հայեացքով մարմին և հոգի, աշխարհի կեանք և հանդերձեալ կեանք իրրև երկու հակառակ և անհաշտ բաներ կանգնած էին դէմ ու դէմ: Մարմինը զօրանար, հոգին էր թուլանում, և ընդհակառակն: Մէկն, երկիրն, ունայնութիւն էր ու տառապանք. միւսը, երկինքը, իսկական բարիք և անդորրութիւն: Եւ ահա ծնունդ է մեր բանաստեղծութեան մէջ զօրեղ քնարերգութիւնը աշխարհի ունայնութեան և իրական կեանքի ոչնչութեան և մարդու թուլութեան մասին:

Տարբ ժամանակիս յանէից,

Անցեալն անյայտ և ապառնին կարծողական,

Ես անհամբեր և բնութիւն թերահաւատ,

Ուր անհաստատք և միտք ցնդեալք,

*) Բանդի որպէս ոչ է առանց Քրիստոսի Աստուծոյ՝ հոգւոյ փրկութիւն, և ոչ առանց տեսան աչաց՝ ու լոյս զուարթութիւն, և կամ առանց տրուելիք նշուից արեւու երբեք քաղցրութիւն,—այսպէս և ոչ առանց խառնութեան ծածկութիւն և սողառնաց անձին՝ քաւութիւն (Բան Մ. եր. 126):

Կիրք հարկաւորք և բարք անժուժկալք,
 Մարմին մեղսամակարդ
 Եւ յօժարութիւն երկբասէր,
 Դիմամարտութիւն անկակից
 Եւ խառնութիւն ներկակական,
 Բնակութիւն կաւեղէն
 Եւ անձրնք ու ուժգնակիր.
 Կարիք անթուելիք և պատահարք ամենագրաւք,
 Միտք չարախնամք և տենչմունք բարխառեացք,
 Կեանք առօրեայք և դժբաղք սակաւաւորք,
 Խարմունք յիմարութեան և խաղալիք աղայականք.
 Աշխատութիւնք ընդունանք
 Եւ վայելմունք երազականք,
 Համբարք ոչնչից և պահեստք հողմոց,
 Նմանութիւնք ստուերաց և կերպարանք ծիծաղելիք:
 Բան. ՄԵ. եր. 141.

Ահա թէ ինչ է իրական կեանքը և մարդը: Բայց այդ չէ
 միայն. մարդկային կեանքը և զգուշելի ու դարչնելի է և չունի ոչ
 մի լաւ բան իր մէջ. չընտանիք թշնամիք, հարազատք հակա-
 տակք, և որդիք դաւաճանողք» են:

Օրրոտ նանրախորրուրդ, բերանս չարախոս.
 Ակնս յայրատառես, տկանջս վրիպալուր.
 Զեռնս մահաձիգ, երկկամունքս անփորձ.
 Ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկիւղ.
 Հետք խոտորնակ, չունչք ծխախառն, գնացք խաւարային.
 Գոյութիւն լերդի վիմական,
 Խորհուրդ ծորեալ, կամք անկայուն.
 Զար անփոփոխ, բարեմասնութիւն սասանեալ.
 Անձն տարագիր, աւանդ վաճառեալ...

Բան Մ.Զ. եր. 142 հտ.

Եւ այսպէս ու աւելի վատթար են ամեն բան և ամենքը, տմեն
 պարապմունքի և ամեն դասակարգի մարդիկ: Աշխարհի յոռեռե-
 սութիւնը սոսկալի է, ոչ մի լաւ բան չի տեսնում նա կեանքի մէջ:
 Բայց սարսուղին այն է, որ թէպէտ աշխարհն ու կեանքն այսպիսի
 են, բայց մարդս կազմուած լինելով մարմնից, ինչքան էլ ճիշդ է թա-
 փոււմ, չի կարողանում ուրանալ այդ մարմինը և միանալ Աս-
 տուծուն:

Եւ արդ, վասն զի ի ձեռն մեծիդ
 Եւ ամենանաբ Արուեստաւորիդ.

Իմա եղանութեան Տեառն և Աստուծոյ,
 Իբր ի բրայա ընտրութեան փութոյ քոյ սիրոյ՝
 Հանապազ եռամ և ոչ երբեք պարզիմ.
 Միշտ խառնիմ զուգիլ և ոչ ևս միանամ.
 Ահա զհօր Արծաթագործդ երկնաւոր իմ ճարտարապետ
 Ի սնոտիս վաստակեալ առ իս աշխատիս...
 Եւ չարութիւնս իմ ոչ հաւեցաւ.
 Զոր ինձէն մոլեալ չարաշար՝
 Իբր զխելագար դիւարախ իմն ողորմելի
 Յա՛ղգնեալ անկարգս խօսիմ՝
 Զիմս զպարտիսս անեցուցանել.
 Քան հաշտութեան հնարս ինձ այսու կազմել,
 Բան կթ. եր. 177

Դրա պատճառն այն է, որ մարդը հոգուց և մարմնից կազմուեալ լինելով հանդերձ՝ միաժամանակ խաղալիք է երկու ներհակ ուժերի մէջ. Աստուած և հրեշտակները ձգտում են նրան բարձրացնել, իսկ սատանան իր լեզէոններով նրան յետ է քաշում: Աշխարհում ու մարմնի վրայ իշխում է սատանան, որ ամենայն հրապոյրներ ստեղծելով մարդուս փորձութեան մէջ է ձգում շարունակ: Եւ մարդն ահա իր անձնիշխանութեամբ դառնում է մի տրագիկական, միշտ յուզալից վիճակի մէջ: Նա ցանկանում է Աստուծու կամքը կատարել, որպէս զի բարձրանայ ու վեր խոյանայ. բայց ծնուած րոպէից ժառանգաբար արդէն բերում է իր հետ մեղքը. բայց այդ՝ նրա ազատ կամքը թոյլ է, ամեն վայրկեան սատանան զրդում է նրան մեղանշել, և նա մեղանշում է ու գլորւում ցած:

Արդարեւ, շատ դժուար է որոշել, թէ Նարեկացին մեղք առելով ինչ է հասկանում. նա իբրեւ մի սուրբ, արդար մարդ, իսկապէս չգիտէ, թէ ինչ է մեղքը, որի մասին և սովորաբար տարտամ, անորոշ բառերով է անցնում: Բայց նա ամենից առաջ միտով կրօնաւոր է, ուրեմն աշխարհի կեանքից հրաժարուած մարդ. ուստի նրա համար ամենայն ինչ աշխարհային՝ մեղք է: Աշխարհային բանկայուն՝ կեանքը, սակայն, մի պատրուկահան գինի է, որ զրաւում, յիմարացնում է տերկրածին մարդուն և մարդ, խելագարուած, չի կարողանում չմտածել, չզբաղուել զրանով. «Մոլորեցայ անառակ ընթացիւք ի միտս վայրենիս. յանդգնեցայ շրթամբք խօսից ի բանս երկրաւորս. զակատեցայ անկասելի ի պատկառելիացն զործոցն: «Երկրկա ամի կենցաղոյս սիրոյ և ի Բեզ թիկունս փոխանակ գիմաց զարձուցի... զանաբառ հոգիս մարմնոյս փափկութեամբ յաւէտ վտտեցի... Յաղօթարանն վայրի ընդ պատաղմունս այսր կենցաղոյս շրջանա-

կեցայ. ոչ կացուցի յոտին զերիվար մտացս երասանաւ բռնին: (Բան Ի. եր. 47): Այսպէս ամենամեծ իրական մեղքն այն է, որ նա չի կարողանում աշխարհից իր միտքը կտրել և իր մարմինը ոչնչացնել. «Յեղիպտոս միշտ ունիս զսրտիդ զգարմնս (բան Բ.):

Մի անգամ որ այդ մեղքը կայ՝ Թագած ամենը երկրորդական է: Որովհետեւ, իսկապէս, Բնչ հարկաւոր է. թէ նա ինչ մեղք ունի իր սրտի վրայ ծանրացած. բաւական է, որ նա այդ մեղքը սրտի բոլոր խորութեամբ զգում է, և այդ մեղքը նրա վրայ լեռնացած է և երկնային բարձրութիւնից միշտ ցած է գլորում նրան, և ինքը ճնշւում է նրա բեռն տակ: Ուստի բուն սաստկութեամբ նկարագրում է նա աւելի մեղքի զգացումը, մեղաւոր մարդուն, քան մեղքը: Նա տառապում է մեղքի հետևանքներով, ինչպիսի մեղք է լինի. նա ունի իր ոչնչութեան, անկեալ զրութեան զգացումը. զգում է իրեն հոգով ջախջախւած ինչպէս մի խորտակւում ծնունդից ծնունդ: Եւ այն գիտակցութիւնը, թէ իր ամեն մի քայլը մեղք է և թէ ի կորուստ տանող մեղքերը անշափ բազմազան են և աւելի քան ծովափի աւազը,—այդ է ահա որ փշաքաղում է նրան և ծփում, մրկում է նրա էութիւնը: «Զի թէպէտ և յոգ բազում են մանուկն ի յափուսն ջրոյն համահաւաքեալը, այլ ուրոյնք և առանձնականք ի ծննդոց աճելութենէ. իսկ մեղանք իմոյս յանցանաց անթիւք. զորս անհնար է առնուլ ի միտ: Ոմն և ծնունդք իւր, ոմն և շառաւիղք իւր, ոմն և բիծք իւր, ոմն և արկածք իւր, ոմն և փուշք իւր, ոմն և արմատք իւր, ոմն և հաստուածք իւր... (Բան Զ. եր. 15—16): Մեղքի հետևանքների այս սոսկումն իսկապէս խորտակում, ջախջախում է նրան: Այդ մեծ թուարկութիւնն հենց ըստ ինքեան խորտակող է և սարսուռից մարդ շնչառաւ և լինում կարգալիս, կարծես, մեղքերի ճնշումից, նրանք անշափ ու անսահման են և նրանց ծնունդն և հետևանքն աւելի ևս զարհուրելի. նրա երևակայութիւնն ստեղծում է միշտ նորանոր մեղանշական ահարկու զրութիւններ, որոնք հալածում են նրան:

Նա մի բոլոր հոգու անգորութիւն չունի, որովհետեւ Սատանան, հետաձգելով մեղքի ստեղծողն, իր ընկալուող լեզուններով, աներևոյթ կանգնած է միշտ նրա մօտ: Բանասերկուն իր ձեռքին ունի նեւտ ու սլաքներ, որոնցով գաղտնի վիրաւորում ու խոցում է նրան. կամ իբրև ընդդիմարտ կռուող վրայ գիմելով պատերազմ է հանում. կամ ստատկման ու մահու կապով փակում է. կամ ձգում տղամասիկ գրի մէջ, վհի ու զնդանի մէջ, մեղաց երկաթներով շղթայելով: Երբեմն նա իբրև խաբող հանութիւններ է բերում ու մեղաց մուրհակներ առնում մարդուց և քրտմանօք յուսթից կախարդել խորամանկում. կամ բանաստեղծի

շուրջը մասախուղով պատում, որի մէջ նա դէպի կորուսան է ընթանում. կամ գիւական տենդ ու ջերմ բերում մարդուս, մահացու թոյն լցնում նրա մէջ: Նա մերթ մարդու համար հազը ու որոգայթ է պատրաստում իբրև որսող և պատրելով վնի մէջ ձգում նրան. մերթ մարդու վրայ լուծ է գնում և սայլի լծում նրան, կամ իբրև խածոտող զազան ժանիք է ցոյց առլիս. երբեմն էլ աղուական խածոունք ազդում հոգուն, այսինքն հեշտասիրական դրգիւ յարուցանելով կործանում է մարդուն, մոխրի ու տղմի մէջ թաւալեցնում, իսկ ինքը հեռու կանգնած քրքրջում է նրա վրայ:

Սասնայի ան, ինչպէս և մեր այժմեան հաւատալիքների մէջ, աւելի մեծ է գիշերը, երբ թանձրամած խաւարը բռնում է աշխարհը և մեր Հսկողը գիշերային հսկումից յետոյ, վաստակած բազմածուփ աշխատանքից, կարճ ժամանակով պէտք է իր խըշտեակը մտնի: Սասնայի դործունէութիւնն ևռանդուն է խաւարի մէջ, որ նրա իշխանութիւնն է և ունի իր առանձին արհաւիրքները: Նա իր գնդերով պաշարում է աղօթողին, որ վտանգաւոր դրութեան մէջ է. լցում է ճանքերի ծանրութեամբ նա պարտում է թի ցնորից ևկամուտ պղտորութեանց, թի տխրական անրջոց: Նա բազմատխուր տարտամութեան մէջ վախենում է, որ մի գուցէ չարը մի նոր գիւտ անէ և իր քնած տեղը իր ճինորինակ դադարման ժամանակ մի նոր փորձանքի մէջ ձգէ իրեն ւաներևոյթ մտածութեամբ, բասրելի կըքով, պատկառելի դիպուածներով,—այսինքն հին Դրութայի գիշերախաբութեամբ: Եւ բանաստեղծն ամենամեծ հոգացողութեամբ խնդրում է Աստուծուն, որ պահէ իրեն այդ վտանգից, որ Աստուծոյ խօսքով սրբէ նրա պատապարանը. հրեշտակները գնդերով, մարգարէները կտակարանով, առաքեալներն աւետարանով պահապան կանգնեն իրեն: Իբրև չարահալած է ամենից առաջ խաչը. որ պիտի պահէ նրան, լինի նրա երգերի պահպանարան, դրուի տան շեմքին, որ սատանան չկարողանայ ներս մտնել: Սենեակի մուտքն ու շեմքը, երգը, առաստաղը, իր անկողինը, իր անձն ու սիրտը, զգայարանները, բոլորն առանձին առանձին հոգացողութիւն են պահանջում: Աստուած պիտի ուղարկէ իր զուարթունների զնդերը, որոնք պիտի կռուեն ընդդէմ գեների դասերին, որպէս զի ինքը ինչպէս անջնա պահում է քնելու, այնպէս էլ անջնա դարձնի: Այս աղօթքները սասնայի դէմ (տես առանձնապէս Բանք ԺԲ. հր. 28. 27. հր. 224 հա. 7. հր. 234. 7Ա, 237) ունին մի տեսակ շկապիչ աղօթքների բնաւորութիւն, որ ցարգ տարածուած են մեր ժողովրդի մէջ. երկուսի մէջ էլ չարահալած միջոցներն են՝ խաչը, երկաթ, քացախ ևն: Անպայման զրանք մա-

սամբ ժողովրդական հաւատալիքից են ծագում, բայց իրենք ևս շատ աւելի ազդել են մեր ժողովրդական հաւատքի վրայ:

Ը.

Ինչպէս զարհուրանքով դպում է բանաստեղծը սատանայի ներկայութիւնն իր կողքին, նոյնպէս նրա համար զգալի է և ներկայութիւնը Աստուծու, որի ողորմութեան նշոյլները ծագելիս ամեն ինչ դիւական ոչնչանում է: Բայց մինչ սատանան գործում է, Աստուած անձնիշխան է թողնում նրան, իր պատուիրանները միայն տուած լինելով մարդուն, թէ ինչպէս կարող է նա փրկուել: Բանաստեղծը սակայն գիտակցում է իր թուլութիւնն ու ոչնչութիւնը և կը ցանկանար նոյն իսկ անձնիշխան չլինել, միայն թէ չմեղանչէր, և իր ու Աստուծու տարբերութիւնն այնպէս անուճանակէ մեծ չլինէր. որովհետեւ որքան Աստուած մեծ է, կարող, բարձր ու մաքուր, այնքան ինքը՝ չնչին, թոյլ, ստոր, աղմասիկ ու պիղծ: Նա երբեքն ունի իսկ մի տեսակ նախանձով է երգում Աստուծու փառքը, որովհետեւ ինքը չունի այդ.

Քեզ արդարութիւն հանդերձեցեր, բարերանը,
Եւ ինձ ամօթ և պատկառանս պատրաստեցեր.

Քեզ փառս վայելչականս,
Եւ ինձ նախատինս յարմարաւորս.

Քեզ քաղցրութեան յիշատակ,
Եւ ինձ մաղձ քացախեալ ի կատարածի:

Քեզ բարերանութիւն անլուելի,
Եւ ինձ ձայնս ողորց աղաղակի.

Քեզ օրհնութիւնս երգոց խնկելի,
Եւ ինձ մերժումն տարազրութեան.

Քեզ իրաւունս բազմաբժանիս,
Եւ ինձ պատասխանատուութիւնս ամենավարնս.

Քեզ բարձրութիւնս տնճառ զովեստից,
Եւ ինձ զանիւն լիզելոյ պատիժ ձաղանաց:

(Բան Ի. եր. 46 հտ.)

Դու լոյս ես և յոյս,

Եւ ես խաւար և յիմար.

Դու իսկութեամբ բարի գովելի,

Եւ ես համայնիւն չար ապիկար.

Դու տէր ստորիցս և երկնից,

Եւ ես անիշխան շնչոյս և հոգւոյս.

Դու բարձրեալ ի կարեաց զատեալ,

Եւ ես տաժանաւոր եւ վտանգաւոր,
Դու ի վեր քան զկիրս երկրիս,
Եւ ես կաւ անարգութեան զարշարեան...

(Բան 2Գ. եր. 221)

Աստուծու եւ մարդու այս տարբերութեան պատճառն ինքը մարդն է իր ազատ կամքով, թէ չէ՝ Աստուած միայն էութեամբ բարի է եւ մարդուս միայն լաւ է ստեղծել, եւ ինքը մարդն է իր ազատ կամքով ընկել (Բան ԽԶ. եր.)։ Մարդուն մեռւմ է՝ ընկած դրութիւնից բարձրանալու համար՝ ապաշխարել եւ յոյսը դնել Աստուծու բարութեան ու զթութեան եւ ամենակարողութեան վրայ։

Աստուած բարերար, հզօր, ահաւոր.

Հայրդ բարի ողորմութեանդ շնորհի,

Որոյ անունդ իսկ Մեծիդ

Ձգթութիւն եւ զընտանութիւն աւետարանէ...

Թէպէտ քո իցեն պարգեք եւ քո ողորմութիւնք.

Այլ ոչ ի պարգևսն ես այնքան նուազեալ,

Որքան յողորմութեանդ...

(Բան ԺԳ. եր. 29 հտ.)

Բայց զարհուրելին այն է, որ այդ բարերար Աստուածը ապաշխարողի բազմաստեղծ ու բիւրաւոր ողորմանքների եւ հարցումների դիմաց մի անտարբեր ու խոր լռութիւն է պահում եւ երբեք չի յայտնում, թէ նա արդեօք այս հեծեծանքներից յետոյ պիտի փրկուի, թէ ոչ։ Երբեք չի բացում թոյն աշխարհի թանձր վարագոյրը։ Բանաստեղծն այս անորոշութեան առաջ տանջւում է, նրա սիրտը նուազում է՝ ցանկանալով իմանալ, թէ արդեօք Աստուած պիտի յիշէ իր բարերարութիւնը. «Անտեսնացնա զգթասիրելիդ, խնամիդ. այլայլեցցես զմարդասիրելիդ, անփոփոխ. նահանջեցցես զկենսագործելիդ անվախճան»... Քանի որ Աստուած ոչինչ չի պատասխանում, բանաստեղծին մեռւմ է միայն եղբակացութիւններ հանել Աստուծու արարքներից ու ստորագրելներից եւ նրա հետ մի աղերսախառն դատ վարել, թէ անպատճառ պիտի փրկի իրեն։

Միւս կողմից սակայն բանաստեղծը ստեղծւմի մէջ է Աստուծու առաջ. որովհետեւ նա ինչքան բարի 'այր է, նոյնքան եւ արդար դատաւոր է։ Ուստի կարող է պատահել որ բանաստեղծը ոչ միայն Աստուծոյ հետ չմիանայ, այլ նոյն իսկ մեղաւոր լինի, քանի որ ամենայն բոլոր կարող է գալ վերջին դատաստանը, որ ինչքան էլ հեռու լինի մարդկութիւնից, անհատի համար ամեն

վայրկեան գայիս է մահով: Այս պատճառով Աստուած, իսկապէս Բրիստոս որդին Աստուծոյ, ամենից առաջ և աւելի յաճախ ներկայանում է բանաստեղծին իբրև եզրագծերի տ'անդը դասուլոր, որի ահաւոր ձայնը շարունակ ուժգին հնչում է արդէն նրա ականջին: Նրա սիրտը դրանից ամբոխում է, միացը օսասանում: Ներսում սկսում է մի զօրեղ կռիւ չնոր ու բարի յուզմունքների, որոնք երկու ներշնչ բանակի բաժանուած՝ միմեանց հետ միշտ ընդհարում են,—որովհետև դասաստանի սարսափը միշտ կայ նրա առաջ,—և նրան ձգում են ամենավառան տարակուսանքի մէջ, իսկ շարունակ զգում է իրեն ինչպէս մի յանցաւոր՝ կանգնած դատաւորի առաջ, ինչպէս մի եղեռնագործ որ առաջուց դիտէ, թէ իրեն սոսկալի պատիժներ պիտի տան, և վերջապէս տեսնում է իրեն ինչպէս մի դատապարտուած: «Ահ, գուր և որոգայթ աննորոգելի... տաճնեղաւ մեծաւ առ դուրս ինձ հասնալ՝ զամօթն մշտնջենաւոր աստէն զծագրելոյ: Ազատուելու ոչ մի միջոց չկայ, բայց եթէ դարձեալ յուսալով Աստուծու շնորհքին՝ բանալ իր վիրաւոր սրտի խորքը, նկարագրել իր հոգին, խոստովանելով տարածել իր մեղքերը, միաժամանակ և գիտակցելով իր ողնշութիւնը՝ փառաբանել Աստուծու մեծութիւնն ու բարութիւնը:

Դրա համար է հենց որ նրա խռովայնոյդ սրտից բղխում է նրա խօսքն Աստուծու հետ ինչպէս մի հառաչանքի ձայն, սրտի հեծութիւն, ողբ ու աղաղակ, որից նրա անձը տոշորւում, ճնշւածութիւն ու հալում է ողջակիզուելով:

Ք.

Այս է ահա ամբողջ Ողբերգութեան բնագոյ իրի հրաշակերտութիւնը: Ամեն բան, ինչպէս կոչում է հեղինակն իր այս քնարերգութեան գլուխները, այս միագոյ իրի բարդումը, կուտակումն է, ներքին յուզման ու շարժումների մի մի կողմերի պատկերացումը, ահ ու սարսափի ցուցումը, գնտնաքարը ու աղետաբեր պաղատանքը, սրտի զաղտնարանի բացատրութիւնը, անձի քսալումը մեղքի առաջ ու տենչանքը վեր խոյանալ, հասնել լուսոյ աղբիւրին: Ամեն ինչ թանձր գոյներով նկարած և մարդկային հոգու և նոյն իսկ մարմնի բոլոր ուժով զգացած:

Սե այս ապաշխարութիւնն ու կոծր, ինքնանուստացումն ու ձաղկումը, անձնապարսաւն ու քարկոծումը, ինքն իրենից զգուանքն ու վայ տալը, նոյն իսկ սեպհական մարմնի ատելութիւնը չափ ու սահման չունին: Նա մեծ հաճոյքով անում է այդ ամենը. որովհետև որքան շատ Զարդի իրեն, այնքան ազատ կը

իննի կորստից. որքան շատ պաղատի, այնքան շուտ կընդունի Աստուծոյ շնորհքը. որքան շատ յանդիմանէ իր մեղաւոր անձը, իր յանցանքները երգէ, այնքան շուտ դուրս կը գայ կեանքի մթին վիշից թի լոյս անձկալիքս:

Եւ վասն զի եզի զքեզ նպատակ
Հանդէպ երեսաց տեսութեան մտացս,
Անձն իմ անպիտան,
Վիճօք ձգելոց արձանաց բանից
Իբր զանճնդիլ զազան վայրենի՝
Անողորմաբար զքեզ քարկոծել...

Բան Թ. եր. 21

Եւ իսկապէս ստգտանքի ամեն մի խօսքը մի ծանր քար է, որով նա ինքն իրեն գանակոծում է (Բան Ի. եր. 47):

Սարսառացնող է աղաչխարոզի այս ողբերգական տեսարանը որ բաց է անում մեր առաջ բանաստեղծը: Միակ միեթարու թիւնը որ կայ այս մօայլ բանաստեղծութեան մէջ, այն է՝ որ փրկութեան վստահութիւնն իսպառ կարուած չէ և տեղ տեղ երևում է յուսոյ նշոյլ:

Յայսը երբեմն զօրանում է, և այդ վայրկեաններում նա փոքր ինչ բացւում է և ինքն իրեն քաջալերում. «Եւ արդ հիմ աւրածիս, անձն իմ կործա՞ն հալ՝ ոչ յաստուածուստ հնարաւորութեանց, այլ ի քումդ ինքնագործ հակամիտութեանց. կամ ընդէջ զիս խռովես՝ յուսահատութեամբ ստանայականաւ: Յուսոյ հիմք կազմում է նախ՝ այն որ Աստուծու համար հնարաւոր է ամենայն ինչ: Այս ժամանակ նա, սիրով լցուած, Աստուծու մեծութիւնն է երգում, երբեմն մեծ հոյակապութեամբ, ինչպէս ամբողջ ԿԳ. բանը, որի մէջ Աստուծու ամենակարող արարքները թուած են մի զօրեղ թափով: Ապա՝ կայ և այն գիտակցութիւնը, թէ մեղքերը ինչքան հեշտածին, նոյնքան էլ դիւրամեծ են:

Քանզի զայն ամենայն գունդս չարութեան

Բանասրկուին զօրաց՝

Սակաւ մի արտօսը կաթուածոց աչաց,—

Իբր զճճիս զեռունս բազմոտանիս

Խխայթից երկրի տկար խլրամանց՝

Անկեալ ի վերայ ծորուլն ձիթոյ,

Կամ զոյգն զեղ ինչ ստտեկչական,—ցամաքեցուցանէ.

Եւ զոյգն մի հառաչուլն սրտի հեծութեան ելեալ ի յոգւոյ,—

Իբր շնչումն հարաւային ջերմութեան խառնել յարևու,
 Զսառնամանեաց սաստկութիւն հայէ...

Բան է. եր. 17:

Բայց այդ գեղերն են՝ Էդժուարակութ պտուղը ծառոց ան-
 հասանելեաց, և անկոխ ճանապարհաց երկը և տաժանմունքս:
 Դրանով, հետեւաբար, միեթարութիւնը մեն չէ, և տանջանքն ա-
 ւելի ևս սաստկանում է, մանաւանդ որ եթէ մի կողմից՝ ազաշ-
 խարութեամբ ջնջւում է մեղքը, միւս կողմից՝ միշտ նորանոր
 մեղքեր են ծնւում, (Բան ՀԱ. եր. 152 հտ.) և ազաշխարողը
 մնում է նոյն վշտահար, նոյն տրագիկական վիճակի մէջ: Ուստի
 նա պէտք է ապաշխարի և միշտ ապաշխարի, իրեն նուստացնի
 ու պարսաւի:

Ժ.

Այս տանջազին վիճակի մէջ բանաստեղծի մեն երեակայու-
 թիւնը, որ հակուած է աւելի դէպի բնութեան և կեանքի մաշյ
 տեսարանները, աւելի ու աւելի ճնշւում է նրան, ստեղծելով միշտ
 նորանոր դարձուրելի պատկերներ: Եթէ տաղերի մէջ երևում է
 երիտասարդ բանաստեղծին իր թեթև ու զուարթ երեակայութեամբ,
 Ողբերգութեան մէջ, ընդհակառակն, նա ցաւագին ու տխուր է:
 Միայն տարբեր չէ այս տարբերութեան պատճառը, այլ դա առա-
 ջանում է աւելի տաղերի ու Ողբերգութեան նպատակների տար-
 բերութիւնից:

Վանական-կրօնաւորական կեանքի միակ ուրախ ժամանակը
 եղել է տերունական տօների պայծառ պաշտամունքը, երբ մի
 կարճ միջոցով, ժամերգութեան ընթացքում զոնէ, թողատուում էր
 թողնել ողբը և ուրախանալ Բրիստոսի ծննդեան ու յարութեան
 համար: Նոյն իսկ շարականների մէջ երևում է այս զուարթու-
 թիւնը, և շատ շարականներ ունին մինչև անգամ ցնծագին փա-
 ռաբանական բնաւորութիւն:

Այսօր ցնծան երկինք ի վերուստ

Մեծապայծառ աւետեօք,

Եւ արարածք ամենայն

Զգեցան զհանդերձ փրկութեան:

Այսօր ցնծան մանկունք առաքաստի,

Բանգի Բրիստոս յարուցեալ՝

Փարատեաց ըզուռ և զտըրամութիւն,

Եւ լուսաւորեաց զաշխարհս:

Այսպիսի ուրախ տօնակատարութեան ժամանակ ասուելու
 համար յօրինուած տաղերն էլ, որ կանոնից զուրս երգուելով՝
 պիտի առանձին շուք տային հանդէսին, բնականաբար պիտի
 զուարթ բնաւորութիւն ունենային: Եւ Նարեկացին իր տաղերի

տեսակով իսկապէս միայն այս կտորքի շարականներն է զարգացնում: Մինչդեռ Ողորդութիւնն, ընդհանրապէս, ապաշխարութեան երգ է և զգացմունքով ու ձևով մօտենում է ապաշխարութեան և ընդհանրապէս «Ողորմեա» կոչուած շարականներին: Դա իսկապէս այդ շարականների կատարելատիւն է, միայն ինքնայատուկ ձևով:

Դէպի տխուր թէ ուրախ կողմը միտուած՝ Իրա երևակայութիւնը, ինչպէս տեսանք, ունի այն էական յատկանիշը, որ ամբողջական պատկերներ է ընդգրկում: Նա «տեսանող» է. տեսիլը մեծ տեղ է բռնում նրա հոգու մէջ: Եւ իրօք, յաճախ Իրա աչքին երևում է ոչ միայն սատանան զանազան կերպարանքներով ու որոգայթներով, այլ և վերջին դատաստանը, դժոխքը, իր մահը ևն: Եւ նա տեսնում է սովորաբար ոչ թէ շեղում, ընդհանուր և էական ուրուագծերով, այլ մօտից, պատկերի մանրամասնութեամբ և բոլոր պայծառութեամբ: Վերլուծութիւնը, լինի երեոյթի, մարմնի թէ հոգու, նրա երևակայութեան ու մտածութեան կարևոր գիծն է, և դրանով է նա աղգում:

Շատ սրտատու է նրա տեսիլն իր մեղսելու, մեղած և նոյն իսկ թաղուած ու փոշիացած լինելու.

Ողորմեա, Տէր, մահու մեղապարտիս

Յաւուր արձակման շնչոյս կենդանութեան,

Մինչ աշացս ողորմագին հայեցուած

Ի բարձունս կողկողիցի,

Զբաղմարկածեան զանգերժ ընթացիցն զանփախչիլին
հանապարհ

Յաչա բերելով մտացս տեսմամբ ամենայնիւ վտանգեալ.

Եւ ի յերդ ընակութեան յարկիս նկատեալ յելիցն շաւիղ,
Թշուառացեալ կիսամեղութեամբ,

Դիմօք այլայլութեան, տատանմամբ մատանցս,

Կարկամ հառաչմամբ. նուազ հեծութեամբ,

Նըբական ձայնիւ, յողբ թախծութեան

Յոգնամատնեայ տարակուսանաց՝

Ի խորոցս աներևութից

Զգործեցելոցս ողբալով հառաչեմ:

Կարող ես, բարեգնութ, և անդ հրաշագործել

Յաւեա զօրութեամբ ասելով,

Թէ՛ ողջ եղիջիր յողոյզ խորտակմանէ...

Կամ թէ՛ երթ ի խաղաղութիւն սրբեալ ի մի դաց:

Եւ զոր յայնմ ժամու ոչ ժամանեցից պաղտել,

Այսօր ընկալցիս մարդասիրապէս,

Ո՞վ երկայնամիտ, բազմաշնորհ, ամենակեցոյց՝
Տեսարանը փոխում է. նա արդէն մեռած է:

Յորժամ, որ այժմս բանապաճոյճ
Խրոխտաձայն, սիգացող, բարձրադարանոց,
Անկեալ զնիմ դի անկենդան,
Կարկեալ ի խօսից, կաշկանդեալ ձեռօք,
Լքեալ անդամօք, խփեալ շրթամբք,
Կափուցեալ աչօք, տախտակ անշարժուն,
Կոնդ կիսայրեաց, արձան անզգայ,
Պատկեր անբարբառ, գոյութիւն անշունչ...
Կարօտեալ այլոց մաղթանաց,
Որք զհաւատոց թշուառիս՝ ձայնիւ նուազեալ՝
Աղբոս հառաչման, ցողով արտասուաց
Բարբարիդ գթութեան ի բարձունս տարածանն.
Ջառ քեզ դարձն յեղանակեն արգահատելով...
Արդ լքաւ, մերժեցաւ, բարձաւ, տրոհեցաւ,
Փախեաւ, սրացաւ,
Տեղի ետ կցորդութիւն զուգութեան կենցաղոյս կենդա-
նութեան,

Իւ յոյսդ որ ի քէն պարզէ՝

Մնացական և անջնջական յիշատակարան պահեցաւ:
Բան ՀՊ. եր. 188 հա.

Այսպիսի մանրամասն նկարագիր սեպնական մահուան և
մեռած դրութեան միայն Նարեկացին կարող էր տեսնել: Նոր
բանաստեղծներից Դուրեանն էլ ունի «Իմ մահը», բայց հրքան
տարբերութիւն երկսի մէջ. մէկն իր յիշատակով է անմահ մնում,
նրան ցաւ է պատճառում, որ յիշատակը կարող է մեռնել. իսկ
միւսը գիտէ, որ ինքն անմահ է, բայց սարսափում է, որ մի գուցէ
Աստուծու հետ միանալու փոխանակ՝ բաժանուի նրանից, և ցա-
ւում է միայն, որ փրկուելու համար ինքն այլ ևս չպիտի կարո-
ղանայ աղօթել և պիտի կարօտի ուրիշների աղօթքին՝ Աստուծոյ
գթութիւն ստանալու համար: Բայց այստեղ ևս նա յուսահատ չէ.
նա ունի իր Ողբերգութիւնը.

Իսկ ինձ եղիցքի պատգամս այս բանի

Արձան փորագրեալ ամենեին անեղձանելի,

Որ փոխանակ իմոյ եղկելւոյս անձին մահացուի՝

Անդադար հնչմամբ հեծութեան լալոյ

Առանց լոկոյ միշտ ազադակէ.

Լիցքի և ոսկերացս քաղտեցելոց՝

Ի հոգապատեան շիրիմ վերադառնալ
Անժոնուհի ձայնիւ զայս խոստովանել,
Հասցէ և մարմնոյս ի հող լուծելոյ՝
Բարբառով իմն անազգեկաւ
Ծածկատեսիլդ զսոյն պաղատել:

Բան ԿԶ. եր. 168

Նրա Ողբերգութիւնն ուրեմն եկրաւոր յիշատակի անմահութիւն չէ, այլ աստուածացման մի մաղթանք մշտամոռնչ. նրա բաղկուած ոսկորներն ու լուծուած մարմինն էլ ձգտում են արեգեբական ոգուն միանալու:

Վերջին դատաստանի համար Նարեկացին յաճախ յիշատակում է, թէ հեռուից տեսնում է մաքով զհանդերձեցոյն հանդէս ահաւորափայլէ, այդ շրայտորձական ընտրութեան օրը:

Վերջին դատաստանի նկարագիրը, որ մեծ տեղ է բռնում նրա երկի մէջ, համեմատ է մեր քրիստոնէական հաւատալիքին, բայց և շատ քան տեցեացած է համեմատ մեր արդի ժողովրդական հաւատալիքներին, որոնք իրենց կողմից կարող են նոյն իսկ Նարեկացուց ազդուած լինել: Երկինքը այլայլելով գալարում է և զորդալով դիպչում երկրիս յատակին, իսկ լայնատարած թանձր գետինն իր հիմքերից սասանւում, տատանւում է. ուժգնակի բախման հետ թնդում են ներքին խորքերը, հարթւում են լեռները, քարերը և բոլոր տարբերները հրդեհւում, հալւում և, ինչպէս ծովի խոռվայոյզ ալիքները, կուտակւում են, որպէս թէ փախչելով: Փոխւում են բոլոր արարածները նոր կերպարանք ընդունելով: Եւ ծածկութիւնը դորժեցնա հրապարակին, և աներևոյթ կրից մեր յայտնին. վարք կրօնից մեր ներդործեցելոց ի մարմինս մեր նկարին, ինչպէս մեր արդի ժողովրդական հաւատքով հոգին դուրսն է լինում, մարմինը՝ ներսը. հոգին ուրեմն պարզ տեսնւում է իր կիրքերով: Եւ որժամ դպրութիւնը հրաշիցն զարմանալեաց... յիւրաքանչիւր մարմինս անպակաս գրութեամբ իսկոյն երևին, և խորութիւնը անճառիցն կնքեցելոց յիմաստից աստեացս առաջի աշաց մերոց կերպարանին (Բան ՀԹ. եր. 210 հան): Այդ ժամանակ երկնքի թագաւորն, անկայառ և անխաբարի, նստում է վերջին ահաւոր դատաստանին, հատուցման վճիռն իր ձեռքին: Եւ մեղապարտ բանաստեղծը ամբողջ էութեամբ ստակում է և միայն անբաւ թուով Վայ տալիս իրեն: Եթանդի սաստիկ է յիշատակն իսկ յառաջեալ քան զհանդիպումն: Նա չգիտէ, թէ ինչ անէ: Փախչել է ուղում հաղճեպ տաղնապով, բայց փախուստն անգերծ է. եւ արագմամբ ոտից փախչելի, ոչ թիկանց

գարձուցանելի, ոչ դիմաց ընդ երկիր մացուցանելի, ոչ բերանով ընդ հոգ հասանելի, ոչ ի խորս երկրի ղողելի (Բան Դ. եր. 10, Բան Խ. եր. 104, ԿԸ. եր. 175 հա. եայլն.): Այդ ժամանակ պահպան հրեշտակը, որ կենակից հզոր ոստիկան է, ամբաստանում է, և Հասուցանողն ահաւոր յանդիմանում է: Նրա սպասաւորները առանց խնայելու խուճապում են, ոմանց կեանքի հրաւիրում, ուրիշներին ամօթի դատապարտում:

Կիսոց զէմս լցեալս ծաղու ցուցանեն

Եւ ինձ ահարկուս և քստմեներս երեսցուցանեն.

Ոմանց պսակս լուսապաճոյնս մատուցանեն

Եւ այլոց կորուստ մահու բողբոքեն,

Արդարոցն ձայն աւետեաց

Եւ ինձ գոյժ անվախճան վշտաց:

Յորժամ առ բարին՝ մահու յաղթութիւն իսպառ մեռանի

Եւ ինձ՝ չարագործիս կրկին յարակայի.

Ուր դրանն բախել ոչինչ ազդիցէ,

Վճար եղեալ գթութեանն առ իս:

Ողբն ու արտասուքը, որ մեռնելուց առաջ գրաւում են երկրիքը, այն ժամանակ իբրև ապաժաման ընդունայնութիւն արհամարհում են: Բանաստեղծը սոսկում է, որ մի գուցէ մեռնելուց առաջ բաւականաչափ հեծութիւն ու հառաչանք ունեցած չէ լինի:

Ջամնջանարանսն բազմապատկա,

Անձաժը անձին աստէն իսկ պատրաստեցի,

Զիւմրդ մխիթարեցայց համառօտեալս յուսոյ.

Զի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք արդարոցն,

Որ փառաւորեալք են երանութեամբ, սարսին ղողալով,

Ոչ բաւին բերել զահաւոր տեսիլ երեսաց մեծ դատաստանին,

Իս՝ եղկելիս, աւանդակորոյս,

Սատակման որդիս, մւր երեսցայց,

Որ ոչ միայն չեմ պսակելոց,

Այլ և պատուհասն իմ անտանելի

Եւ կորուստն անսպառելի (Բան ԶԹ. եր. 111 հա.):

Եւ նա տեսնում է դժոխքը, կորստեան խորխորաւոր, ուր շրեղէն են գետքն, անանջանելի վտակքն, թանձրամած խաւարն, և արտաքոյ այցելութեան մառախուղն. ապականութեան է գուքն, և մշանջնաւոր է տաղնապն. ամենագրաւ տարտարոսն, և անգերծ սառնամանիքն, — անտանելի պատուհասների, մի դառն, դժնդակ օթեանի տեղ մեղաւորների համար, որդներով ու զարչաւորութեամբ լի մի անել արդելարոսն, մի անփախչելի ու

ըողայթ: Արևտեղ պատիժները համեմատ են մեղքերին.

Ձի ոչ ցերեկ սիրով առ ընկերին կարիս մատուցայ՝
 Յիրաւի ի նախուսն վտանգին տազնապեալ սառնում.
 Եւ զի ոչ զցանկական խորխտականութիւն սանձեցի՝
 Յարժա՛ր կրեմ եղկելիս զանգովանալի զկիզուսն:
 Եւ քանզի ոչ սիրեցի զլուսոյդ աւետիս,
 Արդար հատուցմամբ ի մթութիւն ըմբռնողական
 Միգին կորստեան վրիպեալ զանդաշեմ:
 Եւ զի ոչ խտրեցի զմանունս փոքունց յաւցանաց
 Իբր անփասակարբ վարկանելով,
 Պատկանապէս ի խաժանողականացն
 Հազիրն զեռնոց խթեալ խոցութիւմ:
 Եւ զի ոչ ձեռն կարկառու առ կիրս վտանգաւորին՝
 այց տռնել նմին,
 Ի դէպ իսկ ըստ գծադրութեան այսր օրինակի
 Ապականութեանն գրոյ նուիրեալ մատնիմ:
 Բան ԺԹ. եր. 44.

Բանաստեղծին, որ իրեն դասապարտուած է տեսնում և
 դժոխքի դռներին, ուրիշ բան չի մտնում, բայց եթէ խնդրել Աս-
 տուծուն, որ բաւական համարի այս տեսլից կրած տանջանքը և
 շտապի ազատել իրեն:

Այլ արագան, ամենապարզ և զօրութիւն անհառ...

Ձի օգնեալ ի Քէն՝ զարձայց միւս անգամ ի դրանց դժոխոց...

Եւ մի մատնեցայց կորեանցն առիւծուց,

Որք խնդրեն ի Քէն զիս ի կերակուր՝

Ծախել տաամամբքըն զազանութեան,

Ձի զորովայն մահուն լցուցեալ

Հաստուտ պարարեալս անդ ձգեալ հալին,

Ուր անսպառ պահի մնացուած մթերիցն

Ի ծախուսն յախտենից (Բան ՀԹ. եր. 212),

Ինչպէս սատա՛յի դիմաց՝ տժգոյն է Աստուծու պատկերն,
 որ յաճախ վերացական ընդհանուր ստորոգելիներով է որոշում,
 —նոյնպէս և Դժոխքի նկարագրի մօտ թոյլ ու տարտած է Դրախ-
 տի կամ Արքայութեան պատկերը: Բանաստեղծը զրախտի տեսիլ
 չունի, մինչ ընդհանրապէս նա ուժեղ է յատկապէս Սատանայի
 և Դժոխքի տեսարաններով և քառմեքի իրենցից ցուցադրելիս:
 Իսկ ինչ որ իր տա՛ջազին վրնակին, իր նուաստացմանն է
 վերաբերում, նրա երևակայութիւնն անսահման մեծ է ու բազ-
 մադիմի: Յաճախ նա ստեղծում է խոշոր պատկերներ, իրենց բո-

լոր մանրամասնութեամբ, որոնք արդէն լոկ նմանութիւններ չեն, այլ անկախ տեսարաններ ու նկարագիրներ: Այսպէս Բան Ին. եր. 58 հա. խորտակուած նաւի ընդարձակ տեսարանն, և կամ Բան ԾԴ. եր. 138 խեղդուողի պատկերն աւելի կարեւոր, բայց զօրեղ. ճեւ քանդի ի ծուփա բազմալտանգս...:

ԺԱ.

Երևակայութեան մեծութիւնից ու բազմադիմի լինելուց է առաջանում և նրա լեզուական գիւտերի առատութիւնը, որով նա միևնույն իմաստն արտայայտում է բազմազան ձևերով, որոնք նրա մտքի մէջ ծնւում են միաժամանակ: Մտտ առգամ մի կամ երկու պատկեր բաւական կը լինէր իր մտածմունքն ու զգացմունքը լրիւ և զօրեղ արտայայտելու համար. բայց նա բազմաթիւ գիւտեր, մէկը միւսից զօրեղ և գեղեցիկ, շարում է ետեւէ ետեւ անխտիր: Էջի ոչ երբէք հարթ ընթանայ երիվար առանց սանձակալի, և ոչ նաւ համբառնայ հանդէպ առանց ուղղչի, և ոչ արօր կշիռ ինչ գործէ առանց մանկալի, և ոչ երկուորեակէ լծոցն ի ճահ ճեմեսցին առանց եղողի, ոչ ամպ վերաշուէ առանց հողմոյ, ոչ աստեղք ցնդին և կամ գումարին առանց ժամանակին, ոչ արեգակն փոխաբերեալ ուր շրջանակի առանց տարբական օղոյ, և ոչ ես նորք հանդերձ առանց բարեգործիչ հրամանաց ակնարկութեան (եր. 138, Բան ԾԴ. տ. նաև եր. 182 Բան ՀԱ. և այլն):

Պատկերներն այս յորդութիւնից յաճախ լեզուն կորցնում է պարզութիւնը, և երկը ծանր ու դժուար հասկանալի է դառնում, մասամբ նոյն իսկ ճոռոմութեան մէջ ընկնում: Եւ այս է նրա արուեստի ամենաթոյլ կողմը. որովհետեւ բանաստեղծութեան տեքնիկային հմուտ գրողը թոյլ չի տալ, որ երևակայութիւնը բռնանայ իր վրայ և առանց ընտրութեան դրի առնել տայ ամեն ինչ որ իր մտքում ծնւում է: Արդ, Ողբերգութեան ամեն մի գրանդն սովորաբար երեք չորս դրութիւնից է կազմուած. յաճախ երգն սկսւում է Աստուծու գովեստով, նրա ստորոգելիներն ու արարքները թուելով. ապա բանաստեղծն ինքն իրեն մեղադրում է և վերջը գթութիւն հայցում.—բայց այսքանը նա ճապաղում է երկու երեք և աւելի երեսներ զրայ և յաճախ նոյն իսկ շատախօսութեան մէջ է ընկնում: Ընթերցողը միշտ պէտք է իր միտքը լարուած պահէ, որ իրար վրայ կուտակուող յախուռն կըրկնութիւնների մէջ չմոռանայ ամբողջ բանի ընդհանուր իմաստը, որ վերջը տխրի կապուի մի յապաղող նոր իմաստի հետ:

Բայց մի անգամ որ նա այդ լարումը յանձն է տնւում, վարժւում է բանաստեղծի մտածողութեան Իդանակին, ախուհետեւ այդ պատկերների ու կրկնութիւնների տարափը թողնում է իր առանձին ազդեցութիւնը. ընթերցողն ընկնում է բանաստեղ-

ծի խօսքի առատարուի հոսանքի մէջ, նրա սիրտն ևս լցում է նոյն յորդութեամբ, որ զեղում է բանաստեղծի յուզուած սրտից, և նա բանաստեղծի հետ ծփում է զզացմունքի նոյն յորձանքների մէջ. նա ևս յուզում է ու տարւում է մտքի ու սրտի լեռնացած կոհակներից, որոնք անդադար ձգտում են երկինք, ընկնում փշրում են ու նորից ուռչում են, և անվերջ, նման պատկերների կուտակութիւնը, կը նշանակէ, թերութեան հետ ունի նաև առաւելութիւն. մանաւանդ որ դրանք յաճախ սոսկ կրկնութիւն չեն, այլ նոյն հոգեկան կամ ֆիզիքական վիճակի նուրբ նկարագրերն են տարբեր տարբեր կողմերից: Նա այդ ձևով քրքրում, վերլուծում է ներքին վիճակը և աւելի կենդանի դարձնում արտաքինը (տես եր. 174—175, Բան ԿԸ. եր. 63—63, Բան ԻԶ. եր. 72—73, Բան ԻԹ. կն): շԱհա այս կերպարանք ճշգրտագոյն քաղաքաւորիս յանդիմանութեան, տխուր դէմ, քաղեալ հաճանք, ցամաքեալ խոնավութիւն, երթացեալ շուրթն, անշքեալ տիպ, տրամեցեալ ոգի, այլայլեալ ձայն, կրկնեալ պարանոց: Եւ դի թէ ոք զիսկութիւնն իսկ նշանակէ, ոչ անօրինէ. անաճարտաւան միտ, անհպարտ սիրտ, անխնդրող պարզեփ թշուառ, անաղիքստալի պառքեալ, ինքնակշտածրելի դեգերեալ, իրաւամբժ սովեալ, արդարալլուկ քաղցեալ, պատշաճագառ հարուածեալ, ինքնավկայ ժահապարտեալ, արժանապէս հանեալ, անձնանէծ եղկելիս:»

Ինչպէս պատկերների թուի մէջ չափ չդիտէ. նոյնպէս և նրանց տեսակի մէջ ընտրութիւն անել չունի: Երբեմն, ինչպէս յատուկ է ամբողջ միջին դարին և ուսմկին, ամենանուրբ և վեհ մտածութիւնից յանկարծակի անցնում է անճաշակ, կոպիտ ու խիստ արտայայտութեան, և մի անգամ նոյն իսկ (Բան ԿԹ. եր. 177 հտ.) Աստուածային Արծաթագործի քուրայի մէջ եռալու վեհ պատկերից յետոյ անցնում է յանկարծ բոտոտների ու միջատների, նոյնպիսի սիրով կատարած, շատ իրական նկարագրին. բայց և այնպէս լուերի այս մանրամասն նկարագրերը, որ իր տեսակի մէջ առաջինն է, զեղեցիկ է: Այսպիսի չքոտիների պատկերներով կամ ստոր, զարշ առարկաների նմանութիւններով յաճախ նա միայն իր մեղաւոր վիճակի զգուելիութիւնն է ուզում ցոյց տալ (եր. 3. 51. 103 բան Բ. ԻԲ. ԼԹ. և այլն):

Մեռեալ պատկերիս մի ռիս պահեսցես,

Ընդ անշունչ կերպարանիս մի ի դառ քննութեան մացես,

Մահու տանջեցելոյս մի հարուածս յաւելցես...

Կործանեալ շինուածոյս մի պատուհաս մատուցես,

Շանս սպանելոյ մի քարինս արձակեսցես...

Լուոյս ջախջախելոյ մի սաստիկս որոտացես...

Ի յոսս քո անկանիմ և զգաքչապարիզ հետս համբուրեմ,

Չպարտութիւնս խոստովանիմ և զմեզանս հրապարակեմ,
Կշտամբանաց քարամբք կոծիմ և հառաչանօք սրտիս տապանած
(Բան ԿԶ. եր. 168. հտն.)

Հենց այսպիսի նուաստ իրերով ու դրութիւններով է, որ
քանաստեղծը խիստ ուժեղ կերպով գէժ ու գէժ է դնում Աստու-
ծու մեծութիւնը և իր չնչնութիւնը, Նրա բարերար գթութիւնն
և իր ընկած դրութիւնը, իր անճարակութիւնն ու սրտի բոցը, և
վերջապէս իր ստորաքարշ ազիոդորմ ազաչանքն Աստուծուն, որ
գթայ իրեն:

Ամբարտաւանեցայ փռչիս շնչաւոր,
Ամբարհաւանեցայ կաւս ձայնաւոր,
Հպարտացայ հոգս անարգութեան,
Ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի,
Բազուկ կառուցի բաժակս մօներելի.
Տարածեցայ առաւել իբր վեհ,
Եւ դարձնալ իբր զհերքեալ առ իս ինքնամփսփեցայ,
Բարկութեանն բոցով ցոլացայ տիղմս բռնաւոր.
Իբր զանմեռ ոք մեծամանցի
Որ ընդ քառոտանեաց մահու եմ փակեալ:
Բան Ի. եր. 47

Անկեալ կամ չարեօք ի մահինս ավաից ընկողնոց մեզ -ծ՝
Դի կենդանի և խօսուն մեռեալ.
Կարեկցեալ իմուս թշուառութեան՝
Ողբականօք քքուանաց ձայնից.
Ո՛վ բարերար որդի Աստուծոյ,
Օրհնաբանեալ աչացըդ ցօղով
Վերականգնեսցես ի կենդանութիւն,
Իբր զսիրելին ի յանշնչական մեռելութենէ:
Ստոյգ դառնացողս ի գրի մեղաց կամ տարակուսեալ.
Ձեռն մատուցեալ, Արե անստուեր, Որդի Բարձրաւոյ,
Հանցես զիս ի լոյս քումդ նշուլից...
Բան, ԺԸ. եր. 41 հտ.

Հաղաբաւոր մէկը միւսից զօրեղ ու գունաւոր արտայայ-
տութեան կոյտերի մէջ նա դեռ իր գրիչը գտնում է թոյլ և
չգիտէ, թէ ինչպէս իր անարժան անձը ներկայացնէ: Այդ ժա-
մանակ նա զիմում է չափազանցութեան ձևին.

Ձի եթէ զլին մի ծովուց
Ի յորակութիւն զեղոյ յեղեղեցից,
Եւ զդաշտս ասպարիսօք բազմօք սահմանեալ՝

Ի տարածումն լայնութեան քարտենի չափեցից,
 Եւ զպուրակս յողունց անտառաց շամբից եղեգանց
 Ի հատուածս գոյութեան գրչաց կազմեցից,—
 Եւ ոչ զթիւ մի ի բարեկիցն անօրէնութեանց
 Ջօրեցից ընդ գրով սահմանի գրաւելու
 Նա՛ գի թէ զմայրըս Լիբանանու
 Ի մի լուծ կշռոց զօղեցից,
 Եւ կամ զլեւոնն Արարատեան
 Ի կէտ ամբարձման նժարի միոյ
 Արդարութեան միջնորդ կացուցից,—
 Ոչ հաւասարէ տխր էարթութեամբ համազուգակցելու
 Բան Թ. եր. 20

Զափազանցութիւնների համար տես և բան ԿԸ եր. 174.
 Դրախտի չորս զետերի հոսանքներն իբրև իր աշքերից ըխող
 արտասուքներ, բան ԺԵ. 34. Ջրհեղեղի ջրերի կուտակութիւնից
 էլ վեր է իր մեղքերի շեղջերը:

ԺԲ.

Այսպիսի մեծ երևակայութիւն ունեցող բանաստեղծին բնա-
 կանաբար բաւականութիւն չպիտի տար մեր լեզուն. որ զարգա-
 ցած էր միայն պատմութեան, ներբողեանի ու մեկնաբանու-
 թեան համար և արդէն անգոյն ու վերացական էր դարձած: Այս
 պատճառով և նա ստեղծում է մի նոր, ինքնատիպ լեզու, հա-
 րուստ ինքնահնար դարձուածներով և բարդ ու ածանցական բա-
 ռերով, որ համագոր են աճբողջ նախադասութիւնների, յաճախ
 նուրբ ու բազմիմաստ: Եւ որ պիտաւորն է՝ նա վերացական դար-
 ձած ու ճարտասանական լեզուն դարձնում է թանձրացած ու
 գունաւոր նկարէն, քանի որ նա ամեն ինչ մտածում և զգում է
 պատկերներով:

Սակայն ճարտասանութիւնը, այն էլ զարդական ճարտա-
 սանութիւնը, դեռ նրա երկի մէջ մեծ տեղ է բռնում. նա յառա-
 ջաբանների մէջ երբեմն նոյն իսկ յայտնում էլ է այդ, թէ աշ-
 խատում է զանազան ճարտասանական ձևեր գործածել, որպէսզի
 ոճին բազմազանութիւն տայ: Այդ հին ճարտասանութեանը յա-
 տուկ էր համանիշ բառերի և արտայայտութիւնների կուտակու-
 թիւն, ինքնաստեղծ բառերի ու երկար պարբերութիւնների սէր,
 անկանոն ու բարդ, արտասովոր ու նորաձև բացատրութեան հա-
 կում, որ Նարեկացու երկի մէջ ևս տեսնում է զէպի մթնութիւնն
 և երկարաբանութիւնը: Այս ոճը բացառիկ մեր լեզուի մէջ ստեղ-
 ծուած չէր. և մեր լեզուի մէջ համարում են իբրև հետևանք ա-

բարեական ազդեցութեան: Բայց Թ-րդ դարուց արդէն յունաց մէջ, հին քրիթոններէ և հոնտորներէ լեզուի ազդեցութեամբ, առաջ էր եկել մի այդպիսի արուեստական պերճ լեզու, իսկապէս մի սեթեմեթ ոճ, որի մէջ ճարտասանական ձևերը, պատկերաւոր արտայայտութիւններն ու փոխաբերութիւններն աւելի գերադաս էին համարուում, քան սովորական պարզ բացատրութիւններն: Այս հոնտորական լեզուին 7-րդ դարում արդէն նմանում էին և մեր քրիթոնները, ինչպէս Թէոդորոս Բոթնաւորը, որոնք բացի իրենց ինքնահնար բռներից ու դարձուածներից, ենթարկուում էին երբեմն նաև յունարանութեան: Նրանք արդէն այն ժամանակ, երբ դժուար է ենթադրել արաբական ազդեցութիւն, գրում էին չափազանց ծանր, խճողած, զարգարուն ու վերամբարձ ոճով: Այս հոնտորական խրթնաբան լեզուն այնուհետև շարունակուում է զարգանալ մինչև 10-րդ դարը. 9-րդ դարում, Յովհաննէս կաթողիկոսի օրով արդէն, հաստատուած էր գրութեան երկու տեսակ կամ եզանակ, պարզ և հոնտորական կամ, ինչպէս կոչուում է ն. Ծնորհալին, ժմեկին բան և ժածուկ ճառ: Միւնոյն հեղինակը, ինչպէս Նարեկացին, գրում էր երբեմն մեկին, նայն իսկ ժողովրդական պարզ ձևով, երբեմն նաև մթին եղանակով, որ շատ դժուար է հասկանալ, ինչպէս են երբեմն Նարեկացու տաղերի մէջ տողեր ու բառեր:

Ոճական այս երևոյթը կայ նաև ստորին դարերի ասորական գրականութեան մէջ. շքանշացած արաբական լեզուի հարստութեան վրայ՝ ուղում են ցոյց տալ, թէ ասորերէնը յետ չի մնալ իրենց ուսուցիչների լեզուից: Որոնում են քիչ պատահող կամ արուեստական արտայայտութիւններ, որոնցով, իբր հնարանութիւններով, կարծում էին թէ բանաստեղծական պատկերներն աւելի ցայտուն են դառնում: Շնորհաւ ձևով որոնում էին քիչ զործածուող բառեր, համարձակ նորարանութիւններ ու դարձուածքներ, բնական արտայայտութիւնը շուտ էին տալիս և դարձնում մի հանելուկ, որի բանալին պէտք էր ունենալ հասկանալու համար:—Մեր լեզուի մէջ ոճն այս աստիճանի մթութեան հասել է 11-րդ դարում Գրիգոր Մագիստրոսի մի քանի երկերի մէջ, բայց և Նարեկացու տաղերի մէջ ևս, տեսանք, կան մի քանի մութ հատուածներ: Թէ արաբական լեզուն մեր քրիթոնների այս ոճի վրայ ազդեցութիւն ունեցել է թէ չէ և ինչպէս, այդ խնդիրը դեռ պարզուած չէ:

Հաւանաբար արաբական բանաստեղծութիւնից է անցել հայերէնին և յանգը, որի զործածութիւնը չկայ մեր հոգեւոր երգերի մէջ: Նարեկացու Ողբերգութիւնից իմանում ենք, որ 10-րդ դարում արդէն յանգի զործածութիւնը եղել է մեր աշխարհիկ

բանաստեղծութեան մէջ: Եւ այս հասկանալի է. արարական բանաստեղծութիւնն աւելի շուտ մեր աշխարհիկ երգերի վրայ պիտի ազդէր, քան եկեղեցական երգերի: Լաւեաց բանաստեղծութիւն յօրինող ողբասացները,—գրում է Նարեկացին, չքստ ձայնից կողկողանացն և զբանիցն յարմարութիւն հանդերձեն, ի նոյն գիրք բերեալ զաւարտմունս տա՛ցն, որովք առաւել սաստիկ մորմոքեալ ճմլեցուցանեն զաղէտս կարեացն սրտի՛ն: Ըղձից առ արտասուացն բղիմունսս (եր. 61, բան ԻԶ): Եւ ապա ինքը բանաստեղծը այս ամբողջ բանը յօրինում է ի յանգով: ուրեմն ինչպէս արարական կասիդայի մէջ, յանգը նոյն է մի շարք տողերի մէջ: Նոյն յանգը բանեցնո՞ւմ է նա Ողբ՝ Բզում Թեան մէջ և ուրիշ տեղերում:

Տաղերն անյանգ ոտանաւոր են. յանգերն այստեղ պատահական են: Սակայն տաղերի մէջ, ինչպէս երբեմն նաև Ողբերգութեան մէջ, նա աշխատում է ապաւորութիւն առաջ բերել բաղաձայնների հանդիսութեամբ այս կողմից խիստ աչքի է ընկնում, օրինակ, Վարդավառի տաղը.

Գոհար վարդըն վնաս առեալ
Ի վնից վարսիցն արփենից,
Ի վեր ի վերայ վարսիցն
Մաւալէր ծաղիկ ծովային:

Նարեկացու տաղերի մէջ գտնում ենք և «պատասխանի» կոչուած ձևը, որ կայ երբայական բանաստեղծութեան մէջ և 5-րդ դարում արդէն զործածական է եղել ասորական եկեղեցական բանաստեղծութեան մէջ. այն է՝ յաջորդ տողը կամ տունը սկզբւում է նախորդ տան կամ տողի վերջին բառով, կամ նրա մի մասով, կամ մի նման բառով. և կամ թէ տողի սկզբում գրւում է նախորդ տնից կամ տողից մի բառ կամ միտք. այսպէս են, օրինակ, տաղերն ի յարութիւն Ղազարու (եր. 469—472). Յարութեան (եր. 474—476). Համբարձման (եր. 477—478):

Ես ձայն զառիւծուն ասեմ,
Որ զոչէր ի քառաթերին.
Ի բառաթերին զոչէր,
Ձայն առնէր ի սանդարամեան:
Մանդարամեան այն ի դող եղեալ,
Սասանէր ի ձայնէն ահեղ.
Ահեղ ձայնս որ ես լուայ,
Սա քակէ զամուր որ ունիմ...

Կրկնութեան այս արուեստը հաւանօրէն ասորերէնից անցած պիտի լինի հայերէնին աւելի վաղ քան 10-րդ դարը:

Հանգիստութեան արուեստից յիշենք և նոյն տողերի մէջ յանգեր կազմելը. Դու լոյս ես և յոյս, Եւ ես խաւար և յիմար...: (Շարունակութիւնը տես եր. 119):

Եւ վերջապէս մեր հին ու նոր բանաստեղծութեան մէջ գործածական չափերից մի քանիսը գտնուած ենք առաջին անգամ Նարեկացու տաղերի մէջ: Դժբախտաբար մինչև այժմ բացատրուած չէ ոչ տաղերի ծագումը և ոչ էլ այն, թէ արդեօք Նարեկացուց առաջ մեր սովորական տաղաչափական ձևերից մէկը կամ միւսը գործածակամ են եղել մեր բանաստեղծութեան մէջ թէ չէ: Հաւանական է կարծել, թէ Նարեկացին չէ յօրինել ոչ իր գործածած բոլոր չափերը և ոչ էլ տաղի տեսակն իր խրթնարան լեզուով: Մի կողմ թողնելով նրա գործածած չափերի մասին մանրամասն խօսելը, այստեղ միայն այս պիտի շեշտեմ, որ նրա Յարութիւն տաղը սայլի պատկերով մի գեղեցիկ օրինակ է, թէ ինչպէս բանաստեղծը զանազան չափերից խառնուրդ կազմելով կարող է բովանդակութեան համեմատ տպաւորութիւն թողնել միայն ոտանաւորով, մերթ զանդառ ու մեծավայելուչ դարձնելով րնթացքը, մերթ արագ ու թոփշքներով. մի խօսքով՝ արտաքինը համապատասխան դարձնելով արամաղրութեանը:

Նոյնպիսի ազատ ոտանաւորով է յօրինուած և Ողբերգութիւնը գրեթէ ամբողջապէս, հինգվանկանի անդամների ազատ դասաւորութեամբ, միայն երբեմն (աւելի տողի սկզբում) հինգվանկանի անդամին փոխանակում են 2—4 կամ նոյն իսկ 6 կամ 7 վանկանի անդամներ: Դա ազատ անդամներով մի յօրինուածք է, որ բուական մօտենում է արձակ խօսքին, բայց և շատ նուրբ ոտանաւոր է և շատ յարմարում է բովանդակութեանը: Եւ եթէ այժմ Գր. Նարեկացու Ողբերգութեան ոտանաւոր լինելն ընդհանրապէս չեն ընդունում, պատճառն այն սխալն է, որով մեր սովորական չափերից մէկն են ուղեցել տեսնել նրա մէջ: Ինքը հեղինակը իր Ողբերգութիւնը ոչ միայն բանաստեղծութիւն է անուանում. այլ և երգ, նուազ և նոյն իսկ «շափարեակամք», այսինքն ոտանաւոր»^{*)}:

Վերջացնելով, մի անգամ էլ պիտի կրկնել, որ Գր. Նարեկացու Ողբերգութեան մատենանը, իր բուռն գեղութեամբ, իր բազմազանի երևակայութեամբ և ջերմ հաւատի անկեղծ արտայայտութեամբ, մեր բանաստեղծութեան առաջին մեծ հրաշակերտութիւնը լինե.ով՝ ոչ միայն հրաշալիք է երկացել մեր ազգի աշէրն, այլ և մի սրբութիւն հրաշագործ գորութեամբ: Դարեր

*) Գր. Նարեկացու տաղաչափութեան մասին մանրամասն ունենց մեր «Հայերէնի տաղաչափութիւնը» աշխատանքի մէջ, որ անսխալ է:

շարուրակ և մինչև այժմ, մեր ժողովրդի հաւատքով, նա բուժիչ
զօրութիւն ունի, և բուժիչ է ոչ միայն հոգեւոր, այլ և մարմնաւոր
ցաւերի: Եւ որ զարմանալին է, ինքը հեղինակը գուշակել է,
որ իբր գիրքն այդ դերը պիտի կատարէ:

Եթէ համբարտակըն վստահութեան մեղօք յատակի,

Այսու արձանօք պատկանեցելովք

Այնով քո պաշտպան՝ դարձեալ կառուցի:

Եթէ յուսոյն ձգարան սուսերբն յանցանաց հատեալ կտրեսցի,

Կցեսցի դարձեալ միւս անգամ կամօք

Ամենակալիդ բարւոք պատուատեալ:

Եթէ վտանգ մահու անձնական ցաւոյ զօք պաշարեսցէ,

Գացէ փրկութիւն սովաւ առ ի յոյս

Կենաց՝ յաղօթելն առ քեզ, կեցուցիչ:

Եթէ տագնապաւ որ տարակուսի ի սիրտ խոցիցի,

Բաղդրութեամբ քո սովաւ ապրեալ ողջասցի...

Բան Գ. եր. 9 հտ.

